

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ  
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ  
ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2014



## *Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան*

---

ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի անդամները իրենց շնորհակալությունն են հայտնում Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան գրասենյակին՝ միշտ Դիտորդական խմբի կողքին լինելու և ֆինանսապես աջակցելու համար:

2009 թվականից Դիտորդական խմբի աշխատանքները կազմակերպվում են Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

# Բովանդակություն

Ներածություն	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	4
Մոնիթորինգի մեթոդաբանություն	7
<b>1. ԳԼՈՒԽ</b>	
ՀՀ ԱՆ Քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի հետ համագործակցության ամփոփում	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	8
<b>2. ԳԼՈՒԽ</b>	
Անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի և խոշտանգման դեպքերը	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	15
<b>3. ԳԼՈՒԽ</b>	
Ձուլ-ներում պահված անձանց մասին տեղեկություն	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	22
<b>4. ԳԼՈՒԽ</b>	
ՀՀ ոստիկանության Ձուլ-ներում պահվող անձանց իրավունքների հետ կապված խախտումները	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	27
<b>5. ԳԼՈՒԽ</b>	
Բուժզննության և բուժօգնության հետ կապված խախտումների վերլուծություն	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	49
<b>6. ԳԼՈՒԽ</b>	
Ձուլ-ների պահման պայմանների վերլուծություն	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	55
<b>7. ԳԼՈՒԽ</b>	
Դիտորդական խմբի 2013թ-ի աշխատանքային առաջընթացները	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	58
<b>8. ԳԼՈՒԽ</b>	
Դիտորդական խմբի ներքին կանոնակարգում կատարված փոփոխությունների, խնդիրների վերլուծություն	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	61
<b>9. ԳԼՈՒԽ</b>	
Ընթացիկ հաշվետվությունների վերլուծություն	
<u>ՀՀ ոստիկանության մեկնաբանություն</u>	63

## Ներածություն

Ազատագրկման վայրերը մշտապես հանդիսանում են անհանգստության առարկա, ինչպես փորձագետների համար, ովքեր զբաղվում են մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներով, այնպես էլ քաղաքացիական հասարակության համար, քանի որ այդ վայրերում մարդու իրավունքների խախտման հավանականությունը մեծ է:

Վերջին տարիների ընթացքում ազատագրկման վայրերի մոնիթորինգի գաղափարը և դրա իրականացումը ակնհայտորեն տեսանելի են ՀՀ-ում հասարակական վերահսկողություն իրականացնող երկու Դիտորդական խմբերի գործունեության արդյունքում: Ընդունված է, որ ազատագրկման վայրերում խոշտանգման, վատ վերաբերմունքի դեմ պայքարի արդյունավետ միջոցներից է ազատագրկման վայրերի թափանցիկության ապահովումը, որն էլ ինքնին ևս մեկ կարևոր երաշխիք է վատ վերաբերմունքի դեմ պայքարի համար:

Այս համատեքստում հատկապես կարևորվում է ազատագրկման վայրերում մարդու իրավունքների պաշտպանությունը, քանի որ այդ համակարգը երկար ժամանակ փակ է եղել հասարակության համար: Ինչպես իշխանության, այնպես էլ հասարակության գերակշիռ մասի մոտ կարծիք կար, որ նշված համակարգում պահվում են «հանցագործներ», իսկ տվյալ դեպքում մարդու իրավունքների խնդիրները հիմնականում քննարկման ենթակա չեն: Ազատագրկումը ինքնին արդեն պատիժ է և չպետք է ազատագրկման վայրերի պահման պայմանները և ազատագրկվածի նկատմամբ վատ վերաբերմունքը բերեն մարդու արժանապատվության նվաստացմանը:

Ազատագրկված անձանց հետ վարվեցողության ՄԱԿ-ի նվազագույն չափորոշիչ կանոնների 55-րդ կանոնի համաձայն՝ պետությունները պարտավոր են. **«ստեղծել այցելությունների կանոնավոր համակարգ, որոնք կիրականացվեն միջազգային կամ տեղական անկախ մարմինների կողմից, այն վայրեր, որտեղ պահվում են ազատագրկված անձինք, որի նպատակը կլինի կանխարգելել խոշտանգումները և այլ դաժան, մարդկային արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը»:**

06.02.2002թ-ին փետրվարի 6-ին ընդունվեց «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքը, որի 47-րդ հոդվածով կանոնակարգվեց ձերբակալվածներին և կալանավորվածներին պահելու վայրերի գործունեության նկատմամբ իրականացվող հասարակական վերահսկողությունը: 2005 թ-ի հունվարի 14-ին հաստատվեց Դիտորդական խմբի ներքին կանոնակարգը, իսկ 2006 թ-ի մարտի 10-ին կազմավորվեց Դիտորդական խումբը,

որով էլ Դիտորդական խմբին տրվեց լիազորություն զբաղվելու ոստիկանության համակարգի ձեռքակալված անձանց պահելու վայրերում պահվող անձանց իրավունքների և ազատությունների պահպանման խնդիրներով:

Խումբը իր մոնիթորինգային աշխատանքները ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում սկսել է 2006 թ-ի ապրիլ ամսից: 2006 թ-ից մինչ օրս խումբը յուրաքանչյուր տարի ներկայացրել է 6 տարեկան հաշվետվություններ՝ ընդհանուր ՁՊՎ-ների պահման պայմանների, ձեռքակալված և կալանավորված անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ:

Դիտորդական խումբը 2013թ-ի ընթացքում իրականացրել է 65 նախատեսված և 31 չնախատեսված այցելություններ՝ ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներ:

Դիտորդական խմբի 2013թ-ին կատարած մոնիթորինգների արդյունքում արձանագրած փաստերին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ՝ ուսումնասիրելով հաշվետվությունը ամբողջությամբ:

## *ՀՀ ոստիկանության մեկնաբանության՝*

### **Ներածություն**

Համաձայն <<Ձեռքակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ձեռքակալված անձին արգելանքի կամ կալանավորված անձին կալանքի տակ պահելն իրականացվում է օրինականության, ձեռքակալված կամ կալանավորված անձանց՝ օրենքի առաջ հավասարության, մարդասիրության, անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքին և քրեական դատավարության օրենսգրքին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

2001թ. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան, որի նպատակն է ստեղծել անկախ միջազգային և ազգային մարմինների ազատազրկման վայրեր կանոնավոր այցելությունների համակարգ՝ խոշտանգումները և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը կանխարգելելու համար:

Նկատի ունենալով, որ քաղաքացիների, ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում հակասում է մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերին, ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված քաղաքացիների իրավունքներին, ինչպես նաև հաշվի առնելով Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ ԽԿԿ) իրավական չափանիշների պահպանման կարևորությունը՝ ՀՀ ոստիկանության պետի կողմից ՀՀ ոստիկանության համակարգի բոլոր ստորաբաժանումներին հանձնարարվել է՝

- ✓ ապահովել ոստիկանության ծառայողների կողմից ԽԿԿ չափանիշներին համապատասխան վարքագծի դրսևորումն անձանց բերման ենթարկելիս, ձերբակալելիս կամ իրենց իրավասության սահմաններում նրանց նկատմամբ որևէ այլ գործողություն իրականացնելիս,
- ✓ ապահովել վատ վերաբերմունքի դեպքերի, ինչպես նաև այդպիսի վերաբերմունքի վերաբերյալ բողոքների պատշաճ գրանցումը՝ ԽԿԿ չափանիշներին համապատասխան,
- ✓ ԽԿԿ չափանիշները խախտելու ցանկացած դեպք ի հայտ գալու կամ առերևույթ նմանատիպ բողոքի առկայության դեպքում, այդ մասին զեկուցել ՀՀ ոստիկանության ղեկավարությանը, իսկ համապատասխան նյութերը բողոքի հետ միասին օրենքով սահմանված կարգով անմիջապես ուղարկել ՀՀ հատուկ քննչական ծառայություն,
- ✓ ապահովել ոստիկանության բոլոր ծառայողների պարբերական իրազեկումն իրենց գործունեության ընթացքում վատ վերաբերմունքի անթույլատրելիության և դրա ցանկացած դրսևորման համար անխուսափելի պատասխանատվության մասին:

## Մոնիթորինգի մեթոդաբանություն

Մոնիթորինգը բաղկացած է նախապատրաստական մասից (փորձագետների ներգրավում, աշխատանքային պլանի կազմում և վերաբաշխում, ժամանակացույցի կանոնակարգում), տվյալների հավաքագրումից (մոնիթորինգի իրականացում՝ նախատեսված և չնախատեսված այցելությունների միջոցով, ձեռքարկվածների, կալանավորվածների, ՁՊՎ-ի վարչակազմի և հարազատների հետ հարցազրույցի իրականացում, ՁՊՎ-ների պահման պայմանների, բուժապասարկման, կատարվող իրավախախտումների ուսումնասիրում), արդյունքների ամփոփումից, կանխարգելիչ միջոցառումներից և առաջարկությունից:

Տեղեկատվության հավաքագրման համար Դիտորդական խմբի անդամների կողմից մշակվել են ՁՊՎ-ներում մոնիթորինգ իրականացնելու անհրաժեշտ գործիքներ՝ դիտարկման քարտեր: Տեղեկատվության հավաքագրումը իրականացրել են Դիտորդական խմբի 10 անդամները՝ ՀՀ ոստիկանության գործող 33 ՁՊՎ-ներում: Մոնիթորինգների ընթացքում ուսումնասիրվել են ՁՊՎ-ի պահման պայմանները, բուժապասարկումը և իրավախախտումները: Ինֆորմացիայի հավաքագրման համար օգտագործվել է ՁՊՎ-ում պահվող անձանց անձնական գործերը և ՁՊՎ-ում լրացվող բոլոր գրանցամատյանները: Հարցազրույցներ են իրականացվել ՁՊՎ-ում պահվող անձանց, նրանց հարազատների և ՁՊՎ-ի վարչակազմի հետ: Ընդհանուր արդյունքները ամփոփվել են Դիտորդական խմբի անդամների կողմից յուրաքանչյուր մոնիթորինգ կատարելուց հետո՝ հաշվետվության տեսքով, որտեղ տարանջատվել են ՁՊՎ-ում անձի գտնվելու ընթացքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նրանց իրավունքների խախտումները, ինչպես նաև կոնկրետ անձի իրավունքների հետ կապված իրավախախտումները, մարմնական վնասվածքները, բուժօգնության, արտաքին զննության և պահման պայմաններում առկա թերությունները:

Դիտորդական խմբի կողմից հավաքագրված որոշ տեղեկատվությունների ճշգրտությունը ապահովելու համար կրկնակի հետազոտվել են ՔԿՀ-ներում՝ ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի կողմից՝ ում հետ 2013թ-ի ընթացքում ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը համագործակցել է: Կանխարգելիչ միջոցառումները արտահայտվել են տվյալ մոնիթորինգից հետո, արձանագրած տվյալ իրավախախտման վերաբերյալ համապատասխան գերատեսչական մարմինն դիմելով՝ համապատասխան մեկնաբանության, կանխարգելիչ միջոցառումների ակնկալիքով:

# 1. ԳԼՈՒԽ

## Համագործակցության ամփոփում ՀՀ ԱՆ Քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի հետ

Դիտորդական խումբը երկար տարիների աշխատանքային փորձից եկել է այն եզրահանգման, որ որպես կանոն՝ այն անձը, ով ոստիկանության բաժնում ենթարկվել է վատ վերաբերմունքի և գտնվում է ոստիկանության ՁՊՎ-ում, խոշտանգման կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին չի ցանկանում բարձրաձայնել, քանի որ դեռևս գտնվում է վախի ազդեցության տակ: Տվյալ անձինք ավելի անկաշկանդ են լինում և ազատ են արտահայտվում արդեն ՔԿՀ-ներում:

Այս ամենը հաշվի առնելով՝ ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը կարևորել է ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող Դիտորդական խմբի հետ համագործակցությունը:

Խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող դեպքերը բացահայտելու ուղղությամբ 2013թ-ին երկու Դիտորդական խմբերը մշակեցին համագործակցելու ձևաչափ:

Համագործակցության նպատակն էր՝ բացահատել հնարավոր այն դեպքերը, երբ կալանավորված անձը գտնվելով ձերբակալվածի կարգավիճակում՝ ենթարկվել է խոշտանգման կամ նրա նկատմամբ տեղի է ունեցել իրավախախտում:

ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը, ամփոփելով 2013թ-ի ընդհանուր աշխատանքները, դրական է գնահատել համագործակցության արդյունքները ՀՀ ԱՆ Դիտորդական խմբի հետ: ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը գտնում է, որ ներկայացված փաստերը պետք է գրավեն համապատասխան գերատեսչական մարմինների ուշադրությունը:

Համագործակցության արդյունքում բացահայտվել է, որ որոշ դեպքերում ձերբակալված անձինք ՁՊՎ-ում չունենալով մարմնական վնասվածքներ, տեղափոխվելով ՀՀ ԱՆ ՔԿՀ-ներ այնտեղ գրանցել են, և հակառակը՝ ՁՊՎ-ում արձանագրվել է մարմնական վնասվածքները, սակայն ՔԿՀ-ում չի արձանագրվել, ՁՊՎ-ից ՔԿՀ տեղափոխվող անձը ՔԿՀ է հասել մեկ օր անց, անձը խոշտանգվել է հենց ՁՊՎ-ում՝ քննիչի կողմից, անհրաժեշտ բուժօգնություն չի



ցուցաբերվել, ՔԿՀ-ներում գրանցամատյանները և համապատասխան գրառումները կատարվում են թերություններով:

Ներկայացվածի փաստերն են՝

- Կ.Դ-ն՝ ըստ «ՁՊՎ-ում պահվող անձնաց հաշվառման» գրանցամատյանի տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ 09.03.2013թ. ժամը 19<sup>50</sup>-ին, բայց ՔԿՀ-ում ուսումնասիրություններ կատարելիս պարզվել է, որ Կ.Դ-ն ՔԿՀ էր ընդունվել նույն օրը ժամը 19<sup>25</sup>-ին, ավելի շուտ, քան տեղափոխվել է:

Ուսումնասիրելով ներկայացվածը, հանգում ենք մեկ եզրակացության՝ գրանցված ժամերը կրում են ձևական բնույթ:

- Ն.Դ-ն՝ 06.04.2013թ-ին ՁՊՎ ընդունվելիս ունեցել է մարմնական վնասվածք Նստատեղի ձախ և աջ կողմերում կան կարմրավուն հետքեր, ձախ ոտքի ազդրի վրա կա կապտավուն հետք/: Իսկ ՀՀ ԱՆ «Արբիլյան» ՔԿՀ ընդունվելիս նշված անձի մոտ արձանագրվել է վնասվածք/հրանի աջ թիկունքային և ձախ գոտկային հատվածում 10 օրվա վաղեմության քերծվածք, կա լավացման միտում, քերծվածքն առաջացել է տանն ընկնելու հետևանքով/:

Ուսումնասիրելով երկու հաստատություններում արձանագրված մարմնական վնասվածքները, կնկատենք, որ դրանք ամբողջությամբ տարբեր են:

- Հ.Ա-ն՝ 10.04.2013թ-ին ՁՊՎ ընդունվելիս ունեցել է մարմնական վնասվածքներ ձախ ձեռքի բազուկին և աջ ձեռքի արմունկին կա քերծվածք, թիկունքին՝ կարմրավուն հետք/: Ուշագրավ փաստ՝ 11.04.2013թ-ին նշված անձը տեղափոխվում է քննության ՁՊՎ-ի տարածքից դուրս, և հետ է գալիս նոր մարմնական վնասվածքներով աջ նախաբազկի և հոդի կարմրավուն հետք/:

13.04.2013թ-ին նշված անձը ՀՀ ԱՆ «Արբիլյան» ՔԿՀ ընդունվելիս ունեցել է մարմնական վնասվածքներ/Ձախ բազկի քերծվածք, որն ունի մոտ 2 շաբաթվա վաղեմություն, աջ նախաբազկին առկա էին ինքնավնասման հետքեր, որը կատարել էր ՁՊՎ-ում, մի փոքր վերև առկա է հին սպի, և չի հիշում, թե ինչից, և երբ է առաջացել ձախ թիակին առկա է հին սպի, որի մասին ևս չի հիշում, ծնոտին կա կարմրավուն հետք/:

Ուսումնասիրելով երկու հաստատություններում արձանագրված մարմնական վնասվածքները, կնկատենք, որ դրանք ամբողջությամբ տարբեր են: Ինչպես նաև քննչական գործողությունների հետո ետ բերելուց, ստացված մարմնական վնասվածքները որակավորվել են, որպես կարմրավուն հետք, իսկ ՔԿՀ-ում որպես ինքնավնասում, որը կատարել է ՁՊՎ-ում:

- Ա.Ա-ն 22.04.2013թ-ին ժամը 03<sup>00</sup>-ին ձերբակալվել և Երևանի ՁՊՎ է ընդունվել նույն օրը 22<sup>04</sup>-ին, բուժզննություն անցնելիս արձանագրվել է /ձախ ձեռքի ազդրին՝ վերքեր/: Խնդրում ենք ուշադրություն դարձրել բուժակի գրառմանը՝ **ձախ ձեռքի ազդր**:

Ա.Ա-ն կալանավորվել է 24.04.2013թ. և անհայտ պատճառներով ևս 4 օր միջև 28.04.2013թ. պահվել է Երևանի ՁՊՎ-ում: Ա.Ա-ն ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ ընդունվելիս բուժզննություն անցնելիս գրանցվել է հակառակ պատկերը, արձանագրվել է /ձախ նախաբազկի կողային հատվածում տարբեր չափերի մոտ մեկ ամսվա վաղեմության սպիներ և բռնության հետքեր չկան/:

Ուսումնասիրելով, կնկատենք, որ ՁՊՎ-ում վերքերը համարվել են թարմ, իսկ ՔԿՀ-ում 1 ամսվա վաղեմության և չգիտես ինչու ՔԿՀ-ում կատարվում է գրառում, որ բռնության չի ենթարկվել:

- ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը Երևան քաղաքի Երևանի ՁՊՎ-ում ապրիլ ամսվա ընթացքում արձանագրել էր 11 անձանց անուններ, ովքեր ունեցել են տարբեր մարմնական վնասվածքներ: Նշված անձանց տվյալները ՔԿՀ-ներում ուսումնասիրվել են, և պարզվել է, որ նրանցից միայն երեքի՝ Ս.Մ-ի, Ա.Մ-ի և Է.Ղ-ի մոտ է գրանցվել մարմնական վնասվածքներ, իսկ մնացած 8 կալանավորվածների մոտ չի գրանցվել մարմնական վնասվածքներ, բայց արդյունքում՝ Երևան քաղաքի ՁՊՎ-ում արձանագրվել է, որ

- Ա.Լ-ն ունեցել է աջ և ձախ ձեռքերի կապտուկներ:
- Ա.Գ-ն ունեցել է պարանոցի, մեջքի վրա քերծվածքներ, ձախ անրակին կա կարմիր հետք:
- Ա.Ջ-ի կրծքավանդակի վրա կա կարմրավուն հետք, գլխի վրա կա քերծվածքներ, աջ ոտքի ազդրի կողքի վրա կա կապտուկ:
- Ռ.Հ-ի աջ աչքին կա կապտուկ, ձախ ձեռքին կան կտրված վերքեր:
- Ս. Մ-ն ձախ հոնքի վրա կա վերք, ձախ և աջ ոտքերին կան վերքեր:
- Վ. Ե-ն աջ բազկի վրա կա կարմրավուն հետք, ձախ ուսի և թիկունքի վրա կա կարմրավուն հետքեր, ձախ և աջ ոտքերին կա վերքեր:
- Գ.Մ-ի ձախ ձեռքի դաստակի և ձախ ոտքի սրունքին կան վերքեր:
- Ա.Ա-ի աջ աչքը այտուցված էր կան կարմրավուն հետքեր:

Ուսումնասիրելով ներկայացվածը կնկատենք, որ ոչ բոլոր մարմնական վնասվածքներն են գրանցվում ՔԿՀ-ում:

- Ա.Ա-ն բերման է ենթարկվել 26.04.2013թ-ին ժամը 22<sup>30</sup>-ին, 27.04.2013թ-ին 02<sup>45</sup>-ին ընդունվել է ՁՊՎ, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ է տեղափոխվել 30.04.2013թ: ՁՊՎ ընդունվելիս Ա.Ա-ի մոտ ոչ մի մարմնական վնասվածք չի գրանցվել, բայց ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ

ընդունվելիս Ա.Ա-ի սրունքների մակերեսին հայտնաբերվել են կապտուկներ ու կապտած երանգի վնասվածքներ:

Ուսումնասիրելով ներկայացվածը, հանգում ենք մեկ եզրակացության, որ ոչ բոլոր մարմնական վնասվածքներն են գրանցվում ՁՊՎ-ներում:

- Ռ.Փ-ի վերաբերյալ որոշ տեղեկություն ճշտելու համար ուսումնասիրություն էր կատարվել ՔԿՀ-ում:

Հանդիպման ընթացքում Ռ.Փ-ն նշել էր, որ Արմավիրի բաժնի ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում իր գործով զբաղվող քննիչը իրեն խոշտանգել է հենց ՁՊՎ-ում: Դեպքի վերաբերյալ ՀՀ ոստիկանության Դիտորդական խումբը հայտարարություն է տվել ՀՀ գլխավոր դատախազին, որին կարող էք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում :

- ՀՀ Ոստիկանության Դիտորդական խումբը խնդրել է, որպեսզի ՔԿՀ-ում ուսումնասիրություն կատարվեր Է.Վ-ի վերաբերյալ: ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում 18.01.2013թ և 19.01.2013թ նշված անձի համար չորս անգամ հրավիրել է շտապօգնություն: Բժիշկները կատարել են համապատասխան գրառումներ /զարկերակային հիպերտոնիա/ երկու անգամ բժիշկները գրել են, որ պետք է հետազոտվի, բայց ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել: 21.01.2013թ-ին տեղափոխվել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ և ՔԿՀ-ում ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միայն 5 ամիս անց՝ 26.06.2013թ-ին տեղափոխվել է դատապարտյալների հիվանդանոց՝ հետազոտվելու:

- Ա.Ջ-ն բերման է ենթարկվել ոստիկանության բաժին 22.04.2013թ-ին ժամը 07<sup>30</sup>-ին, ՁՊՎ է ընդունվել 23.04.2013թ-ին ժամը 03<sup>40</sup>-ին՝ բերման ենթարկելուց մոտ 20 ժամ անց: 25.04.2013թ. ժամը 11<sup>50</sup>-ին Ա.Ջ-ն ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ տեղափոխվելու նպատակով դուրս է բերվել Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ից, բայց ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿՀ է ընդունվել 26.04.2013թ. ժամը 19<sup>30</sup>-ին:

Ուսումնասիրելով փաստը կնկատենք, որ Ա.Ջ-ն 20 ժամ գտնվել է անհայտ վայրում, բերման ենթարկվելուց և ՁՊՎ տեղափոխվելու ընթացքում, և 31 ժամ 40 րոպե՝ ՁՊՎ-ից ՔԿՀ տեղափոխվելու ընթացքում:

Ավելացնենք նաև, որ որոշ տեղեկություն հնարավոր չի եղել ճշտել ՔԿՀ-ներում համապատասխան փաստաթղթերի անհասանելիության պատճառով, որը մտահոգության տեղիք է տալիս: Միաժամանակ նաև հարկ ենք համարում տեղեկացնել, որ ՔՀԿ-ներում չեն գրանցվում ըստ պատշաճի, թե տվյալ կալանավորը ում ուղեկցությամբ, ժամը քանիսին և ոստիկանության որ ՁՊՎ-ից է ընդունվել ՔԿՀ:

## ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերի դիտորդների խմբի ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի հետ համագործակցելու վերաբերյալ

Ոստիկանության համակարգի գործող ՁՊՎ-ներում և ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում դիտորդների խմբերի համագործակցությունը և համագործակցության արդյունքում ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների ու ազատությունների խախտման դեպքերի բացահայտումն անհրաժեշտ է և ողջունելի, սակայն հարկ է նշել, որ անձի նկատմամբ ոստիկանության բաժնում կամ բաժնի ՁՊՎ-ում խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վատ վերաբերմունք չի ցուցաբերվում, հետևաբար նա չի կարող գտնվել վախի ազդեցության տակ և լինել կաշկանդված: Հարկ եղած դեպքում նրանք իրենց իրավունքները պաշտպանելու համար բարձրաձայնում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր դիմումներով, որոնց օրենքով սահմանված կարգով ընթացք է տրվում:

Ի դեպ, ՁՊՎ-ներում և ՔԿՀ-ներում նույն անձի մոտ հայտնաբերված մարմնական վնասվածքների գրանցումների և վարույթն իրականացնող մարմիններին իրազեկումների, ինչպես նաև ՁՊՎ-ից ՔԿՀ տեղափոխման, այդ մասին ժամային տվյալների անհամապատասխանության վերաբերյալ ոստիկանությունը ոչ բոլոր դեպքերով կարող է տալ մեկնաբանություններ՝ ՔԿՀ-ների գործունեության մասին տեղեկատվությանը չտիրապետելու պատճառով:

Նշված մարմնական վնասվածքների անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացվում է մեկ օրինակ՝ այսպես.

- ✓ Հ.Ա-ն ՁՊՎ է ընդունվել 10.04.2013թ. ժամը 06<sup>00</sup>-ին, որի մոտ հայտնաբերվել է մարմնական վնասվածք, ինչի վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժզննության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվել են համապատասխան գրառումներ և իրազեկվել է վարույթն իրականացնող մարմնին: 11.04.2013թ. ժամը 17<sup>20</sup>-ին առաջին դատական նիստից հետո ՁՊՎ վերադառնալով, Հ.Ա-ն խցում կատարել է ինքնավնասում՝ աջ ձեռքի դաստակի ներսի մասը շփելով մահճակալի երկաթյա խողովակին՝ ստացել է մարմնական վնասվածք: Փաստի առթիվ անմիջապես ահազանգ է տրվել ոստիկանության

Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն և ոստիկանության Էրեբունու բաժին, որի մասին <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարվել է մարմնական վնասվածքի վերաբերյալ երկրորդ գրառումը: 12.04.2013թ. դատարանի կողմից որոշում է կայացվել Հ.Ա-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը և 13.04.2013թ. ժամը 09<sup>20</sup>-ին տեղափոխվել է ՔԿՀ:

Ձերբակալված Ա.Ա-ի վերաբերյալ <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժօգնության>> գրանցամատյանում կատարված գրառումը՝ <<ձախ ձեռքի ազդրին կան վերքեր>> պարզապես վրիպակ է, իսկ ինչ վերաբերվում է վերջինիս <<անհայտ>> պատճառով 4 օր ՁՊՎ-ում ավել պահելուն, ապա տեղեկացնում ենք, որ Ա.Ա-ն 22.04.2013թ. ժամը 03<sup>00</sup>-ին ձերբակալվել է, դատարանի կողմից 24.04.2013թ. ժամը 22<sup>20</sup>-ին խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, իսկ հաջորդ օրը՝ 25.04.2013թ. քննիչի կողմից կայացված որոշման համաձայն, վերջինս որպես կալանավոր ևս 3 օր պահվել է Երևանի ՁՊՎ-ում:

Հարկ է նշել, որ դիտորդական խմբի 2013թ. ընթացիկ հաշվետվություններին ոստիկանության կողմից տրված մեկնաբանություններով արդեն իսկ տրվել են պատասխաններ, որ կալանքի որոշում ստացած անձինք ուղեկցող դասակի կողմից անմիջապես տեղափոխվում են համապատասխան ՔԿՀ-ներ, որտեղ ընդունման ժամերի գրանցումն իրենց գործառույթն է:

22.04.2013թ. մեղադրյալ Ռ.Փ-ն ոստիկանության Արմավիրի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 17.04.2013թ. ժամը 21<sup>30</sup>-ի սահմաններում ոստիկանության Արմավիրի բաժնի ՁՊՎ-ի քննչական սենյակում նույն բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Ա.Մ-ն ատամնաքրիչով վնասել է իր ձեռքերը, ենթարկել ֆիզիկական բռնության և պահանջել 4000 ԱՄՆ դոլար կաշառք: Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Արմավիրի բաժնում նախապատրաստվել են նյութեր: 29.04.2013թ. նյութերն ըստ քննչական ենթակայության ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Նյութերի լրացուցիչ նախապատրաստությամբ չի հիմնավորվել քննիչ Ա.Մ-ի կողմից մեղադրյալ Ռ.Փ-ին ծեծի ենթարկելու և նրանից կաշառք պահանջելու հանգամանքը, ուստի 17.04.2013թ. որոշում է կայացվել ՀՀ քր.դատ.օր.-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Ա.Ջ-ն բերման է ենթարկվել 22.04.2013թ. ժամը 07<sup>30</sup>-ին և ձերբակալվել է նույն օրը ժամը 10<sup>30</sup>-ին: Ա.Ջ-ի մասնակցությամբ կատարվել են մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ և 23.04.2013թ. ժամը 03<sup>40</sup>-ին տեղափոխվել է ՁՊՎ: 24.04.2013թ. ժամը 14<sup>50</sup>-ին Ա.Ջ-ն տեղափոխվել է դատարան կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցը

քննության առնելու: Դատարանի որոշմամբ Ա.Ջ-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և նույն օրը որոշումը տրամադրվել է ՁՊՎ վարչակազմին՝ Ա.Ջ-ին <<Աբովյան>> ՔԿՀ տեղափոխելու համար: 25.04.2013թ. ժամը 11<sup>50</sup>-ին Ա.Ջ-ն ոստիկանության Երևան քաղաքի վարչության ուղեկցող դասակի կողմից տեղափոխվել է <<Աբովյան>> ՔԿՀ: Ինչ վերաբերվում է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի կողմից տրամադրված ինֆորմացիային, որ Ա.Ջ-ն ՔԿՀ է ընդունվել 26.04.2013թ. ժամը 19<sup>30</sup>-ին, ապա այդ տեղեկատվությունն իրականությանը չի համապատասխանում և նշվածի վերաբերյալ առկա է համապատասխան փաստաթուղթ: Նշվածի վերաբերյալ խմբի ընթացիկ հաշվետվությանը տրվել է սպառիչ մեկնաբանություն:

Ինչ վերաբերվում է բուժզննության արդյունքներին և մարմնական վնասվածքներին, ապա բուժզննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ իրազեկումներ են ուղարկվել վարույթն իրականացնող մարմիններին, որոնց վերաբերյալ գրառումներ են կատարվել համապատասխան գրանցամատյանում: Այսինքն մարմնական վնասվածքներով ՁՊՎ-ներ ընդունվող բոլոր անձանց վերաբերյալ տրվել են իրազեկումներ:

Չեն բացառվում նաև այնպիսի դեպքերը, որ ՁՊՎ-ում անձի մոտ առաջացել է մաշկի թեթև գրգռում, որի վերաբերյալ իրազեկում չի տրվել, իսկ հետագայում ՔԿՀ տեղափոխվելուց հետո այն խորացել է և ՔԿՀ-ից դրա վերաբերյալ իրազեկում է տրվել (օր. ոստիկանության Կոտայքի բաժնի ՁՊՎ-ում պահված Ա.Դ-ն):

## 2. ԳԼՈՒԽ

### Անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի և խոշտանգման դեպքերը

*2001թ-ին ՀՀ-ն վավերացրել է Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան:*

ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ «խոշտանգում» հասկացությունը նշանակում է ցանկացած գործողություն, որով որևէ անձին դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք՝ նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, այն գործողության համար պատժելու, որը կատարել կամ կատարման մեջ կասկածվում է նա կամ երրորդ անձը, կամ նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած տեսակի խտրականության վրա հիմնված պատճառով, երբ նման ցավը կամ տառապանքը պատճառվում է պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի կողմից կամ նրանց դրոմամբ կամ համաձայնությամբ»:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խաշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:


ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արգելքը: Սահմանադրության 17-րդ հոդվածում սահմանված է, որ *ոչ ոք չպետք է ենթարկվի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատագրված անձինք ունեն մարադասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Մարդուն չի կարելի առանց իր համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի:*

Խոշտանգում եզրույթով հանցակազմ նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածում, որը չի համապատասխանում ՄԱԿ-ի Կոնվենցիայի 1-ին հոդվածում տրված խոշտանգման եզրույթին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի համաձայն՝ խոշտանգումը այնպիսի գործողություն է, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք:

ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված խոշտանգումը դասվում է՝ միջին ծանրության հանցագործությունների շարքին: Հանցակազմի առկայության համար հատուկ սուբյեկտ չի պահանջվում, այսինքն պաշտոնատար անձի կամ վերջինիս թույլտվությամբ ուժեղ ցավի կամ մարմնական, բարոյական տառապանքի պատճառում, ինչպես նաև բացակայում է կոնկրետ նպատակը՝ այն է տուժողից կամ երրորդ անձից տեղեկատվություն կամ ինքնախոստովանություն ստանալու, որոշակի գործողության կատարման համար վախեցնելու կամ պատժելու և այլ:

Դիտորդական խումբը իր աշխատանքների ընթացքում ուսումնասիրել է նաև ՁՊՎ մուտք գործած անձանց մարմնական վնասվածքները, հետազոտել և վերլուծել հավաքագրված տվյալները՝ հնարավոր խոշտանգման կամ անմարդկային վերաբերմունքի դեպքերը բացահայտելու համար /տվյալները ներկայացվում են Խմբի վերջին այցելության ընթացքում ՁՊՎ-ում պահված անձանց թվերով /:




Ուսումնասիրելով ընդհանուր պատկերը, հանգում ենք մեկ եզրակացության՝ ՀՀ մարզերում գործող 33 ՁՊՎ-ներում 712 պահված ձեռքարկված անձանցից մարմնական վնասվածքներով




ընդունվել են 88 անձ՝ 12.36%, այն դեպքում երբ Երևանի ՁՊՎ ընդունված 719 ձերբակալվածներից մարմնական վնասվածքներով ընդունվել է 236 անձ՝ 32.8%:

Այս ամենը պայմանավորված նրանով, որ ՀՀ մարզային բոլոր ՁՊՎ-ները գործում են սովյալ մարզային ոստիկանության բաժնի ենթակայության տակ և ՁՊՎ-ի վարչակազմը ենթարկվում է սովյալ ոստիկանության բաժնի ղեկավարին: Ավելին՝ արդեն իսկ ՁՊՎ-ի պետի պարտականությունները իրականացնում է սովյալ ոստիկանության բաժնի հերթապահ մասի պետը, որն էլ հիմնական պատճառ է հանդիսանում ոչ բոլոր մարմնական վնասվածքները գրանցելու համար:

Հաջորդիվ ներկայացված է մարմնական վնասվածքների հետազոտությունը:



ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում արձանագրված 236 մարմնական վնասվածքներից հետազոտվել է 55 դեպք, որոնցից առանձնացվել է կապտուկները և սալջարդերը: Արդյունքում՝ 55 անձանց մոտ գրանցվել է 58 տարբեր տեսակի կապտուկներ և սալջարդեր:



ՀՀ ոստիկանությունում գործող 32 ՁՊՎ-ում արձանագրված 88 մարմնական վնասվածքներից հետազոտվել է 22 դեպք, որոնցից առանձնացվել է կապտուկները և սալջարդերը: Արդյունքում՝ 22 անձանց մոտ գրանցվել է 25 տարբեր տեսակի կապտուկներ և սալջարդեր:

Ներկայացված մարմնական վնասվածքները մեծամասամբ նմանատիպ են, նույն հատվածներում: Օրինակ՝

1. Մարզային ՁՊՎ-ներում գրանցված անորձիների ցավերից և կապտուկներից երեքն էլ գրանցվել է ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Կոտայքի ՁՊՎ-ում:
2. 20.06.2013թ-ին Նոր Նորքի բաժին տեղափոխված Կ.Ս-ն, Ն.Գ-ն, Վ.Ա-ն, Գ.Հ-ն և Ս.Ս-ն Երևանի ՁՊՎ են ընդունվել նմանատիպ չնչին տարբերությամբ մարմնական վնասվածքներով՝ մեջքի, ձախ ուսահողի, ձախ ուսի և բազկի կարմրավուն հետքեր, աջ քունքի, պարանոցային թիկունքին, ձախ գոտկատեղեղի կարմրավուն հետքեր, ձեռքերին՝ կապտուկներ և քերծվածքներ:

Այս ամենը ներկայացնելով Դիտորդական խումբը չի կհսում ՀՀ ոստիկանության ընթացիկ հաշվետվություններում տրված այն պնդումները, որ մարմնական վնասվածքով ՁՊՎ ընդունված անձիք մինչ ՁՊՎ ընդունվելն են տվյալ մարմնական վնասվածքները ստացել, քանի որ հավանականությունը քիչ է, որ նմանատիպ մարմնական վնասվածքներով են անձիք բերվում ՀՀ ոստիկանություն:

Միաժամանակ արձանագրվել է, որ քննչական գործողություններից հետո էլ կրկին այլ մարմնական վնասվածքներով ՁՊՎ են ընդունվել անձինք:

Դիտորդական խումբը արձանագրված մարմնական վնասվածքների վերաբերյալ պարբերաբար ընթացիկ հաշվետվություններով դիմել է ՀՀ գլխավոր դատախազին և ՀՀ ոստիկանությանը:

Այսպիսով՝

- 01.04.2013թ-ից մինչև 30.04.2013 թ-ը Երևանի ՁՊՎ-ում պահվել են 84 ձերբակալված անձինք, որոնցից 22-ը ընդունվել են մարմնական վնասվածքներով, մոտ՝ 26.1%: (ընթացիկ հաշվետվություն – 2621/1328): ՀՀ գլխավոր դատախազության կողմից մեկնաբանություն չի տրվել:
- 12.06.2013թ-ից մինչև 24.10.2013 Երևանի ՁՊՎ-ում պահվել է 251 ձերբակալված անձինք, որոնցից 101-ը ընդունվել են մարմնական վնասվածքներով, մոտ՝ 40,2%, իսկ 28 ձերբակալվածների մոտ նկատվել են ավելի լուրջ և բազմաթիվ մարմնական վնասվածքներ: (ընթացիկ հաշվետվություն – 2621/1382)

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ձերբակալվածները ՁՊՎ-ում գտնվելու ընթացքում խուսափում են կիրառված խոշտանգման վերաբերյալ բարձրաձայնել, և հաշվի առնելով պրակտիկան, որ կալանավորվելուց և ՔԿՀ տեղափոխվելուց են միայն բարձրաձայնում խոշտանգման վերաբերյալ երկու Դիտորդական խմբերի համագործակցության արդյունքում /էջ 9/ արձանագրվել են երևույթը հաստատող փաստեր:

Դիտորդական խումբը գտնում է, որ մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված անձանց մարմնական վնասվածքները ստանալու պատճառները չբացահայտելու հիմնական խնդիրներն են՝ անպատժելիությունը և լիարժեք վերահսկողության բացակայությունը: Ուստի՝ Խումբը ևս մեկ անգամ առաջարկում է ՀՀ ոստիկանությանը ստեղծել նոր հասարակական խումբ, ոստիկանության բաժիններում վերահսկողություն իրականացնելու նպատակով:

## ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը՝

**ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահված անձանց բուժսպասարկման, մարմնական վնասվածքներով վարույթն իրականացնող մարմիններին տրված իրազեկումների և նրանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության վերաբերյալ**

<< Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն, ձերբակալված անձն իրավունք ունի առողջության պահպանման, անհետաձգելի բժշկական օգնության, ինչպես նաև գնսվել իր ընտրած բժշկի կողմից:

ՁՊՎ-ներում 2013թ. ընթացքում պահված 4063 անձանցից բուժզննությամբ հայտնաբերված մարմնական վնասվածքների վերաբերյալ քննչական մարմիններ են ուղարկվել 363 իրազեկումներ (8.9%): Յուրաքանչյուր իրազեկումով քրեական գործով հիմնական վարույթից առանձին նախապատրաստվում են նյութեր, որոնք, հիմքերի առկայության դեպքում, ըստ քննչական ենթակայության ուղարկվում են ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Դիտորդների խմբի կողմից 2013թ. տարեկան հաշվետվությունում նշված այն հանգամանքը, որ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ների վարչակազմերը ենթարկվում են տվյալ բաժնի ղեկավարությանը, որն էլ պատճառ է հանդիսանում ոչ բոլոր մարմնական վնասվածքները գրանցելու համար, ապա դա անհիմն մեկնաբանություն է, քանի որ ՁՊՎ-ները ներառվել են բաժինների հերթապահ մասերի կազմում, ինչի արդյունքում ՁՊՎ-ների աշխատանքների հսկողությունը դրվել է մարզային վարչությունների շտաբների վրա և ավելի լայն շրջանակով մշտապես պահվում է ուշադրության կենտրոնում, որը ցույց է տվել իր արդյունավետությունը:

ՀՀ ոստիկանությունը դիտորդների խմբի ընթացիկ հաշվետվություններին բազմիցս տվել է մեկնաբանություններ, որ ՁՊՎ-ներ ընդունված անձինք մարմնական վնասվածքները ստացած են:

լինում մինչ ՁՊՎ ընդունվելը, հավելելով որ ՁՊՎ-ներում ձերբակալված անձանց խոշտանգումների դեպքեր չեն արձանագրվել անկախ այն հանգամանքից, որ դիտորդների խումբը համակարծիք չէ:

ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ կոպիտ, անհարգալից վերաբերմունք դրսևորելու, առավել ևս՝ խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դեպք ՀՀ ոստիկանությունում դառնում է լայն քննարկման առարկա, մեղավոր անձինք ենթարկվում են խիստ կարգապահական պատասխանատվության:

### 3. ԳԼՈՒԽ

#### ՁՊՎ-ներում պահված անձանց մասին տեղեկություն

Դիտորդական խումբը արդեն 5 տարի է, ինչ բարձրաձայնում է ՁՊՎ-ներում պահվող, ձերբակալվածների թվից մոտ 3 անգամ գերազանցող կալանավորված անձանց մասին:

Հիմնախնդրի հիմնական պատճառը դատական նիստերի նշանակման, դրանց հետաձգման արդյունքն է: Կալանավորված անձինք դատական քննությանը մասնակցելու համար ՔԿՀ-ից տեղափոխվում են այն մարզ, որտեղ գտնվում է քրեական գործի վարույթը և պահվում են ՁՊՎ-ներում՝ դատական քննությանը մասնակցելու համար: Որոշ դեպքերում արձանագրվել է, որ դատավորները դատական նիստից հետո կրկին դատական նիստի օր են նշանակում 2-3 օր անց, որի դեպքում լուրջ խնդիրներ են առաջանում կալանավորված անձանց հետ տեղափոխումը ՔԿՀ և կրկին դատական նիստի ապահովումը:


ՀՀ-ում գործող 33 ՁՊՎ-ներում կալանավորված անձանց պահելու ժամանակ խախտվում է նրանց իրավունքները, քանի որ ըստ <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված է՝ <<..., կալանավորված անձին սահմանված ժամկետում կալանավորվածներին պահելու վայր փոխադրելու անհնարինության դեպքում կալանավորված անձը ձերբակալվածներին պահելու վայրում պահվում է կալանավորվածին պահելու վայրի համար սահմանված կարգով և պայմաններով>>, որը չի ապահովվում:

Դիտորդական խումբը հուսով է, որ նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո կալանավորված անձանց թիվը ՁՊՎ-ներում կտրուկ կնվազի:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2013թ-ին ՁՊՎ-ներում կալանավորված անձանց թիվը գերազանցում են ձերբակալված անձանց թվին՝ 58%-ով:

*Դիտորդական խումբը կարծում է, որ նման քանակի կալանավորված անձանց ՁՊՎ-ում պահելու համար անհրաժեշտ է համապատասխան պայմաններ ստեղծել <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի պահանջներով:*

2013թ-ի ընթացքում ՁՊՎ-ներում պահված անձինք




Ներկայացված գրաֆիկի ուսումնասիրությունից պարզվում է, որ 2013թ-ի ընթացքում մարզային ՁՊՎ-ներում պահվել են ընդհանուր թվով 55 կանայք (ձերբակալված և կալանավորված), որը կազմում է ընդհանուր ՁՊՎ-ներում պահված անձանց թվի 2.29%, իսկ Երևանի ՁՊՎ-ում՝ 26 կին, որը կազմում է Երևանի ՁՊՎ-ում պահված անձանց 3.61% : Սակայն ի տարբերություն Երևանի ՁՊՎ-ի, որտեղ աշխատում են կին ոստիկաններ՝ այդ թվում նաև բուժակ, ՀՀ մարզային ՁՊՎ-ներում չկան նշված աշխատողները և համապատասխան գործառույթները (խուզարկություն, բուժզննություն, արտաքին զննություն և այլն) կատարվում են ոչ իրավասու և ոչ մասնագիտացված անձանց կողմից, որն էլ իր հերթին հանգեցնում է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:

Մարզային ՁՊՎ-ներում պահվել են ընդհանուր թվով 10 անչափահաս (ձերբակալված և կալանավորված), որը կազմում է ընդհանուր ՁՊՎ-ներում պահված անձանց թվի 0.41%, իսկ Երևանի ՁՊՎ-ում պահվել են 23 անչափահասներ, որը կազմում է 3.2%:

*Դիտորդական խումբը առաջարկում է համապատասխան հաստիք տրամադրել մարզային բոլոր ՁՊՎ-ներում և ավելացնել մեկական հաստիք, ով կաշխատի կանանց և անչափահասների հետ:*

Դիտորդական խումբը մտահոգվելով այն հանգամանքով, որ ձերբակալումից հետո ազատ արձակված անձանց քանակը հասնում է մտահոգիչ թվի, ուսումնասիրություն է կատարել տվյալ մասով:



Երևանի ՁՊՎ-ից ազատ են արձակվել ընդհանուր ձերբակալվածների 40.47%, իսկ ՀՀ մարզերի ՁՊՎ-ներից՝ 38.7%:

Ունենալով հետևյալ պատկերը գալիս ենք մեկ եզրահանգման՝ անձին ձերբակալելը օգտագործվում է որպես վերջինիս պատժի ենթարկելու ևս մեկ միջոց:



## ՀՀ ոստիկանության մեկնարանությունը՝

### **ՁՊՎ-ներում պահված անձանց մասին տեղեկություններ**

<< Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն կալանավորվածներին պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությունը կալանավորվածներին պահելու վայրից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատարանի որոշմամբ, կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածներին պահելու վայր՝ մինչև երեք օր տևողությամբ:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության բացակայության պատճառով կալանավորված անձին սահմանված ժամկետում կալանավորվածներին պահելու վայր փոխադրելու անհնարինության դեպքերում կալանավորված անձը ձերբակալվածներին պահելու վայրում պահվում է կալանավորվածներին պահելու վայրի համար սահմանված կարգով և պայմաններով:

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի և Երևան քաղաքի ՁՊՎ-ներից ստացված 2013թ. տարեկան հաշվետվության վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՁՊՎ-ներում պահվել են 4063 անձ, որից 2362 կալանավորվածներ (58.1%): Մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների ՁՊՎ-ներում պահված անձանց գերակշիռ մասը կազմում են կալանավորվածները, այն պարզ պատճառով, որ դատական նիստերին և քննչական գործողություններին վերջիններիս մասնակցությունը ապահովելու համար ՔԿՀ-ներից տեղափոխվում են ՁՊՎ-ներ, ինչպես նաև դատական նիստերը հաճախակի հետաձգվում են, ինչի հետևանքով կալանավորված անձը մի քանի անգամ կարող է տեղափոխվել ՁՊՎ:

Հարկ է նշել, որ ՁՊՎ-ում պահվելու ընթացքում կալանավորված անձի իրավունքները չեն խախտվում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՁՊՎ-ում ապահովվում է գրեթե բոլոր այն պայմանները, որոնք առկա են ՔԿՀ-ներում: Նշենք նաև, որ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում ստեղծված են անհամեմատ ավելի լավ պայմաններ, այդ պատճառով էլ ՁՊՎ-ներում կալանավորված անձանցից պայմանների վերաբերյալ երբևէ բողոքներ չեն ստացվել:

2013թ. ընթացքում ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի ՁՊՎ-ներում պահվել են 89 կանայք, որը կազմում է

նշված ՁՊՎ-ներում պահված անձանց թվի 2,7%-ը, իսկ Երևանի ՁՊՎ-ում նույն ժամանակահատվածում պահվել է 41 կին, որը կազմում է ընդհանուր պահվածների 5,3 %-ը: Երևան քաղաքի ՁՊՎ-ում կանանց ընդունելիս բուժզննությունը կատարվում է ՁՊՎ ծառայող կրտսեր-տեսուչ կին բուժակների կամ հրավիրված բուժանձնակազմի կողմից, իսկ արտաքին զննությունը և խուզարկությունը իրականացվում է կրտսեր-տեսուչ կին բուժակների կամ ՁՊՎ-ի կին ծառայողների կողմից: Մարզային վարչությունների ենթակա բաժինների ՁՊՎ-ներում կանանց ընդունելիս բուժզննությունը իրականացվում է հրավիրված բուժանձնակազմի կողմից, իսկ խուզարկությունը և արտաքին զննությունը կատարվում է բաժինների կին ծառայողների կողմից, ինչի համար հատուկ պատրաստվածություն կամ մասնագիտություն չի պահանջվում:

2013թ. ընթացքում ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների 32 ՁՊՎ-ներում պահվել են թվով 29 անչափահաս, որը կազմում է նշված ՁՊՎ-ներում պահված անձանց թվի 0,9%-ը, իսկ Երևանի ՁՊՎ-ում նույն ժամանակահատվածում պահվել է 32 անչափահաս, որը կազմում է ընդհանուր պահվածների 4,2 %-ը:

Հարկ է նշել նաև, որ ձերբակալումը դատավարական հարկադրանքի միջոց է, որի կիրառման հիմքերն ամրագրված են օրենսդրորեն և այս տեսանկյունից դիտորդական խմբի եզրահանգումն այն մասին, թե վարույթն իրականացնող մարմնի կողմից ձերբակալումն օգտագործվում է որպես պատժի ենթարկելու միջոց՝ լիովին հիմնագուրկ է:

Հավելենք նաև, որ դեռևս 2013թ. առաջին եռամսյակում ՀՀ ոստիկանության շտաբում՝ իրավասու ստորաբաժանումների հետ քննարկվել է դիտորդների խմբի կողմից առաջարկված մարզային ՁՊՎ-ներում կին ծառայողների հաստիքներ ավելացնելու առաջարկը, որի կապակցությամբ արդեն իսկ տրվել է սպառիչ պատասխան:

## 4. ԳԼՈՒԽ

### ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների հետ կապված խախտումները

Ձերբակալված և կալանվորված անձանց իրավունքները պաշտպանված են մի շարք միջազգային և ներպետական օրենքներով: Չնայած այդ հանգամանքին՝ փակ հաստատություններում դեռ շարունակվում են ազատագրված անձանց իրավունքների խախտումները:

ՀՀ-ում գործող 33 ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքները խախտվում են տարբեր ժամանակահատվածում, տարբեր պատասխանատու անձանց կողմից, տարբեր ձևաչափով: Դիտորդական խումբը կատարել է լայնամասշտաբ և խորացված ուսումնասիրություններ և պարզել է, որ ՁՊՎ-ում պահվող անձանց իրավունքների խախտումները կարելի է բաժանել հետևյալ կերպ՝

#### 5.1. Արգելանքի վերցնելու և ձերբակալելու իրավախախտումները

- Արգելանքի վերցնելու ժամը չգրանցելը
- Հետախուզվող մեղադրյալի արգելանքի վերցնելուց ձերբակալման արձանագրություն չկազմելը
- Խախտումներով լրացված ձերբակալման և բերման ենթարկելու արձանագրությունների կազմում
- Ձերբակալումից հետո ձերբակալվածին ուշ ՁՊՎ ընդունելու խախտումներ
- Արդեն ձերբակալվածի կարգավիճակում գտնվող անձին ՁՊՎ բերման ենթարկել
- Անձին ապօրինի անազատության մեջ պահելու հետ կապված խախտումներ

#### 5.2. Քննչական գործողությունների հետ կապված խախտումները

- Ժամկետների խախտումներով քննչական գործողություններ կատարելը

#### 5.3. Կալանավորված անձանց նկատմամբ կատարվող խախտումները

- Կալանավորված անձանց առանց բավարար հիմքերի ՁՊՎ ընդունելը

### 5.1 Արգելանքի վերցնելու և ձերբակալելու իրավախախտումները

#### Արգելանքի վերցնելու ժամը չգրանցելը

Արգելանքի վերցնելու պահը կանոնակարգվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129 հոդվածի 2-րդ մասով: Արգելանքի վերացնելը իրենից ներկայացնում է անձի տեղաշարժման սահմափակում, որի չգրանցելը արդեն իսկ իրենից ներկայացնում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի և ՀՀ քր. դատ. օր-ի խախտում: Ավելացնենք նաև, որ արգելանքի վերցնելու պահը պետք է գրանցվի ձերբակալողի կողմից՝ ձերբակալման արձանագրության մեջ, որը չի կատարվում:

Ստորև ներկայացնում ենք մի քանի դեպք, բայց ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ ընթացիկ հաշվետվություններում:

1. Վ.Ա-ն որպես հետախուզվող հայտնաբերվել էր ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Բաղրամյանի բաժնի կողմից և նրան արգելանքի վերցնելու պահը ոչ մի տեղ գրանցված չէ: Միայն 12.04.2013թ.-ին ժամը 15<sup>50</sup> տեղափոխվել և ընդունվել է ՀՀ ոստիկանության Մյունիքի ՄՎ Կապանի ՁՊՎ, որովհետև հանդիսանում էր տվյալ տարածաշրջանի բնակիչ: Վ. Ա-ի հետ ոչ մի գործողություն չկատարելով, 3 օր անց՝ 15.04.2013թ. ժամը 15<sup>00</sup>-ին տեղափոխում են ՀՀ ոստիկանության Արտաշատի բաժին, քանի որ վարույթն իրականացնող մարմինը գտնվում էր տվյալ տարածքում:
2. Ս.Թ-ն ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Հրազդանի բաժին բերման է ենթարկվել «Ձվարթնոց» օդանավակայանից 26.04.2013թ.-ին ժամը 04<sup>00</sup>-ին և ժամը 04<sup>10</sup>-ին ընդունվել է ՁՊՎ: Արդյունքում ոչ մի տեղ չի երևում, թե նշված անձը «Ձվարթնոց» օդանավակայանում երբ է արգելանքի վերցվել:

Միաժամանակ հայտնենք, որ «Ձվարթնոց» օդանավակայանի գծային մասի և ՀՀ սահմանային անցակետերից անձանց բերման ենթարկելու ժամը ոչ մի տեղ չի արձանագրվում:

*Դիտորդական խումբը գտնում է, որ յուրաքանչյուր անձի բերման ենթարկելուց՝ բերման արձանագրությունը պետք է կազմվի հենց տեղում և նրա ազատ տեղաշարժումը սահմանափակելու ժամանակ, անպայման պետք է նշվի ժամը, օրը և վայրը բերման ենթարկելու և ձերբակալելու արձանագրությունների մեջ :*

## Հետախուզվող մեղադրյալին արգելանքի վերցնելուց

### ձերբակալման արձանագրություն չկազմելը

Հետախուզվող անձին հայտնաբերելու դեպքում գործառույթը կանոնակարգվում է քրեական դատավարության օրենսգրքի 259 հոդվածի 3-րդ մասով «*Մեղադրյալի հետախուզումը նրա գտնվելու տեղի բացահայտումն է, մեղադրյալին ձերբակալելը և վարույթն իրականացնող մարմնի տրամադրության հանձնելն է*»:

Միաժամանակ նշենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանը իր թիվ LԴ/01/0197/06/08 որոշմամբ անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կանոնակարգմանը՝ 32-րդ կետում կարևորել է քրեական դատավարության շրջանակներում, ազատությունից զրկված անձին անհապաղ դատարան ներկայացնելու երաշխիքային նշանակությունը և 34-րդ կետով ներկայացնում է, որ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա) ընթացքում տարվի դատավորի մոտ: Իսկ նույն որոշման 24-րդ կետով վճռաբեկ դատարանը գտնում է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված «անհապաղությունը» ըստ ՀՀ քրեական դատավարության՝ դա ձերբակալման եռօրյա ժամկետն է, որից հետո անձը կամ ազատ է արձակվում, կամ միջդատական վարույթն իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ նրա նկատմամբ, որպես խափանման միջոց ընտրվում է կալանավորումը:

Արդյունքում՝ հետախուզվող անձին հայտնաբերելուց հետո, անձը ձերբակալվում է, որն էլ հիմք է հանդիսանում նրան ՁՊՎ ընդունելու և հանձնվում է վարույթն իրականացնող մարմնին:

Արդեն 3 տարի է Դիտորդական խումբը աշխատանքներ է տանում, գործառույթի պահպանման ուղղությամբ, որը դրական միտում է գրանցել, բայց դեռ ունենք բաժիններ, որտեղ չի իրականացվում:

Ստորև ներկայացնում ենք մի քանի դեպք, բայց ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ ընթացիկ հաշվետվություններում:

1. Մ.Հ-ն 09.01.2013թ. ժամը 03<sup>30</sup>-ին ընդունվել է ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ որպես հետախուզվող: Նրա անձնական գործում բացակայում էր ձերբակալման արձանագրությունը:
2. Ա.Կ-ն 01.06.2013թ-ին ժամը 00<sup>25</sup>-ին ընդունվել է ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Ախուրյանի ՁՊՎ, որպես հետախուզվող: Նրա անձնական գործում բացակայում էր ձերբակալման արձանագրությունը:  
Նմանատիպ խախտումներ արձանագրվել են ՀՀ ոստիկանության Արտաշատի, Գորիսի, Ախուրյան և Վարդենիսի բաժիններում:

*Դիտորդական խումբը առաջարկում է ևս մեկ անգամ համապատասխան հանձնարարականներ տալ վերը նշված բաժիններին՝ պահպանելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները:*

**Խախտումներով լրացված ձերբակալման և  
բերման ենթարկելու արձանագրություններ**

Դիտորդական խմբի 2013թ-ի աշխատանքների ընթացքում արձանագրվել է, որ որոշ դեպքերում ձերբակալելու և բերման ենթարկելու արձանագրությունների կազմումը կրում են ձևական բնույթ, որոնք կազմվում են զուտ միայն տվյալ արձանագրությունները ունենալու համար:

Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ երբեմն անձինք ՁՊՎ ընդունվելուց հետո են ձերբակալվում, կամ բերման ենթարկելու, ձերբակալելու և անձնական խուզարկություն կատարելու ժամերը համընկնում են, ձերբակալման արձանագրության մեջ ձերբակալողի և ձերբակալվածի ստորագրությունները բացակայում են, ձերբակալման արձանագրությունները կազմվում են առանց ժամերը նշելու:

Անհրաժեշտ է փաստել, որ դատավարական փաստաթղթերի պատշաճ լրացնելը նախաքննության մարմնի պարտականությունն է և անթույլատրելի է նման պրակտիկան: Փաստորեն չի բացառվում, որ նախաքննական մարմինը խախտի օրենքով նախատեսված բոլոր ժամկետները, դատավարական գործողություններ իրականացնելու ընթացակարգը և հաջորդականությունը՝ հետագայում արձանագրությունները կազմի իրեն հարմար տարբերակով: Իսկ այդ փաստերը պարզելուց հետո արդարացումը որպես կանոն լինում է տեխնիկական վրիպակը, ինչը անընդունելի է: Ստացվում է, որ օրենսդիրը նախատեսել է դատավարական փաստաթղթերի կազմումը՝ բացառելու համար անձի իրավունքների խախտումը, սակայն այն չի ծառայում իր նպատակին:

Ստորև ներկայացնում ենք մի քանի դեպք, բայց ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ ընթացիկ հաշվետվություններում:

1. Գ.Բ-ն ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Հրազդանի բաժին բերման է ենթարկվել 10.04.2013թ. ժամը 08<sup>00</sup>-ին, նույն ժամին ընդունվել էր ՁՊՎ, ՁՊՎ-ում խուզարկության էր ենթարկվել ժամը 08<sup>10</sup>, բայց ձերբակալվել էր նույն օրը՝ ժամը 09<sup>05</sup>:

2. Վ.Պ-ն ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արարատի ՁՊՎ էր ընդունվել 08.02.2013թ. ժամը 18<sup>15</sup>-ին: Նշված անձի բերման ենթարկելու, ձերբակալելու և անձնական խուզարկություն կատարելու ժամերը համընկնում են:
3. Ռ.Հ-ն ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ էր ընդունվել 12.04.2013թ-ին ժամը 10<sup>30</sup>: Ռ.Հ-ն ձերբակալվել է նույն օրը, ժամը՝ 08<sup>30</sup>, բայց ձերբակալման արձանագրության մեջ բացակայում էր ձերբակալողի և ձերբակալվածի արձանագրությունները:
4. Ա.Գ-ն ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի ՁՊՎ էր ընդունվել 27.07.13թ. ժ. 12<sup>30</sup>-ին , բայց նրա ձերբակալման արձանագրության մեջ, ժամը բացակայում էր:

*Դիտորդական խումբը առաջարկում է ուշադրություն դարձնել ՁՊՎ ընդունվող անձանց ընթացակարգային հարցերին և պահպանել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջները (բերման արձանագրության օրը, ժամը, բերման ենթարկելու վայրը, ձերբակալման արձանագրություն կազմելու օրը, ժամը, ինչ հանցագործության մեջ է կասկածվում և այլն):*

### **Ձերբակալումից հետո ձերբակալվածներին ու ՁՊՎ ընդունելը**

Հիմք ընդունելով, որ բերման ենթարկելուց, ձերբակալելուց հետո, ըստ ՀՀ քրեական դատավարություն օրենսգրքի անձը կարող է հարցաքննվել, այդ պատճառով հնարավոր է ձերբակալումից հետո որոշ ժամանակ անց անձը ընդունվի ՁՊՎ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205<sup>1</sup> հոդվածի 1-ին կետի՝ <<հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ 4 ժամից ավելի, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունով տառապող անձի հարցաքննությունը՝ 2 ժամից ավելի>>: Իսկ 2-րդ կետով՝ <<հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձի հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8 ժամը, իսկ անչափահասների, ինչպես նաև հոգեկան կամ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ 6 ժամը>>:

Խմբի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձերբակալվածների հետ քննչական գործողությունները կատարվում են նշված պահանջների խախտումներով:

Ներկայացնում ենք նշվածի վերաբերյալ մի քանի օրինակ, իսկ մնացածին կարող եք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններից:

1. Տ.Գ-ն ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի բաժնում ձերբակալվել է 21.04.2013թ-ին ժամը 23<sup>00</sup>-ին: ՁՊՎ է ընդունվել 22.04.13թ-ին ժամը 12<sup>35</sup>-ին` 13 ժամ 30 րոպե անց:
2. Ն.Մ-ն ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Թալինի բաժնում ձերբակալվել է 31.10.2013թ. ժամը 23<sup>50</sup>-ին: Թալինի ՁՊՎ է ընդունվել 01.11.2013թ. ժամը 17<sup>30</sup>-ին` 17 ժամ 40 րոպե անց:
3. Հ.Կ-ն ձերբակալվել է 27.05.2013թ. ժամը 06<sup>30</sup>: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ է ընդունվել 28.05.2013թ. ժամը 01<sup>10</sup>-ին` 23 ժամ անց:
4. Ա.Մ-ն ձերբակալվել է 18.05.2013թ. ժամը 17<sup>50</sup>: ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ է ընդունվել 19.05.2013թ. ժամը 15<sup>25</sup>-ին` 21 ժամ անց:
5. Գ.Գ-ն բերման է ենթարկվել ոստիկանության բաժին 04.12.13թ. ժամը 11<sup>30</sup>. ձերբակալվել է նույն օրը, ժամը 18<sup>10</sup>` 7 ժամ անց, իսկ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ է ընդունվել 11 ժամ անց` 05.12.2013թ-ին ժամը 05<sup>20</sup>:

Նմանատիպ խախտումներ Դիտորդական խմբի կողմից գրանցվել են ՀՀ ոստիկանության Արմավիրի, Աշտարակի, Ախուրյանի, Թալինի, Երևանի ՁՊՎ-ներում:

Խմբի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշ դեպքերում ձերբակալվածը ՁՊՎ է ընդունվում շուրջ մեկ օր ուշացումով և անհայտ է, թե ձերբակալվածները որտեղ են պահվել մինչ ՁՊՎ ընդունվելը, գործնականում հնարավոր չէ վերահսկել, թե արդյոք ձերբակալվածը հնարավորություն է ունեցել օգտվելու իր հանգստի իրավունքից, թե` ոչ: Սա խիստ մտահոգիչ է և այս արատավոր պարակտիկան անհրաժեշտ է վերացնել:

*Դիտորդական խումբը առաջարկում է հարգել ՀՀ քաղաքացու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված իրավունքները և ձերբակալումից հետո տալ նրան հանգստանալու և սնվելու ժամանակ :*

### **Արդեն ձերբակալվածի կարգավիճակում գտնվող անձանց բերման ենթարկել**

Ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153 հոդվածի 1-ին կետի` <<բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննությանը չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացնելն է,....>:

Դիտորդական խմբի մոնիթորինգի արդյունքների ուսումնասիրությունները ցույց են տվել , որ արդեն իսկ բերման ենթարկված կամ ինքնակամ ոստիկանության բաժին ներկայացած անձին ձերբակալելուց հետո կրկին բերման են ենթարկում` համապատասխան բերման ենթարկելու արձանագրություն կազմելով:



Ստորև ներկայացնում ենք մի քանի դեպք, բայց ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում:

1. Կ.Ա-ն ՀՀ ոստիկանության Շիրակի ՄՎ Ախուրյանի բաժնում ձերբակալվել է 26.04.2013թ-ին ժամը 17<sup>10</sup>-ին, որից հետո 26.04.2013թ-ին ժամը 18<sup>00</sup>-ին կազմվել է բերման ենթարկելու արձանագրություն արդեն ձերբակալվածի կարգավիճակով և ընդունվել է ՁՊՎ:
2. Ս.Ս-ն ՀՀ ոստիկանության Արմավիրի ՄՎ Արմավիրի բաժնում ձերբակալվել է 25.01.2013թ-ին ժամը 21<sup>30</sup>-ին և քննիչի սենյակից բերման է ենթարկվել ՁՊՎ, որի վերաբերյալ կազմվել է բերման ենթարկելու արձանագրություն:

Նմանատիպ խախտումներ արձանագրվել են ՀՀ ոստիկանության Թալինի, Արմավիրի, Նոյեմբերյանի, Ախուրյանի և Սևանի բաժիններում:

*Դիտորդական խումբը հայտնում է, որ նմանատիպ իրավախախտումները արդեն իսկ վերացված են՝ խմբի միջամտության շնորհիվ:*

### **Անձին ապօրինի անազատության մեջ պահելը**

Ըստ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի՝ «*Եթե ձերբակալված անձը, ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման*» իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129 հոդվածի 2-րդ կետով նախատեսվում է «*ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի*»: Նշված նորմերը ուղղված են ապահովելու անձի ազատությունը և անձոնամխելիությունը, իսկ անձին ապօրինի անազատության մեջ պահելը պատժելի և անընդունելի է իրավական և ժողովրդավարական պետությունում:

Դիտորդական խումբը 2013թ-ի ընթացքում արձանագրել է ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ներկայացված կետերի 40 նմանատիպ խախտումներ, այն դեպքում, երբ կատարված մոնիթորինգի ընկած ժամանակահատվածում ՀՀ գործող ՁՊՎ-ներում գրանցվել են 1431 ձերբակալվածներ:

Ներկայացված թվերը ուսումնասիրելուց նկատում ենք, որ ձերբակալվածների մոտ 4%-ի ձերբակալման առավելագույն ժամկետը խախտվել է:

Դիտորդական խումբը նպատակահարմար չգտնելով տարեկան հաշվետվության մեջ ներառել բոլոր 40 խախտումները, ներկայացնում է դրանցից մի քանի օրինակ, ընդհանուր պատկերացում կազմելու համար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Դիտորդական խումբը պատրաստ է նշված 40 դեպքերի վերաբերյալ տալ համապատասխան տեղեկություններ:

1. Վ.Մ-ն ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի ՄՎ Վայքի ՁՊՎ: Ըստ անձին բերման ենթարկելու արձանագրության՝ բերման է ենթարկվել 11.08.2013թ. ժամը 06<sup>10</sup>-ին: Քննիչին է հանձնվել նույն օրը՝ ժամը 07<sup>05</sup>-ին և հաջորդիվ ՁՊՎ է ընդունվել ժամը 12<sup>45</sup>-ին: Վ.Մ-ն 3 օր անց՝ 14.08.13թ. ժամը 10<sup>15</sup>-ին խցից դուրս է բերվել և տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան խափանման միջոցը քննարկելու նպատակով, այն դեպքում, երբ Վ.Մ-ի առավելագույն 72 ժամը արդեն իսկ լրացած է եղել 14.08.2013թ-ին ժամը 06<sup>10</sup> և պետք է ազատ արձակվեր արդեն իսկ բաժնի պետի որոշման համաձայն:
2. Ա.Ա-ն ՀՀ ոստիկանության Կոտայքի ՄՎ Նաիրիի բաժին բերման է ենթարկվել 22.02.2013թ. ժամը 12<sup>00</sup>-ին, ձերբակալվել է նույն օրը՝ ժամը 14<sup>50</sup>-ին և ընդունվել է ՁՊՎ ժամը 18<sup>20</sup>-ին: Ա. Ա-ն 3 օր անց՝ 25.02.2013թ. ժամը 14<sup>20</sup> -ին խցից դուրս է բերվել և տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան խափանման միջոց քննարկելու նպատակով, այն դեպքում, երբ նրա առավելագույն 72 ժամը արդեն իսկ լրացած է եղել 25.02.2013թ-ին ժամը 12<sup>00</sup> և պետք է ազատ արձակվեր արդեն իսկ բաժնի պետի որոշման համաձայն:
3. Հ.Ա-ն ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի բաժին բերման է ենթարկվել 18.03.2013թ. ժամը 16<sup>00</sup>-ին, 18.03.2013թ. ժամը 22<sup>30</sup> ընդունվել է ՁՊՎ, 21.03.2013թ. ժամը 16<sup>00</sup>-ից 17<sup>10</sup> տեղափոխվել է դատարան: Հ.Ա-ն 21.03.2013թ-ին ժամը 16<sup>00</sup> պետք է ազատ արձակվեր՝ դատարան տեղափոխելու փոխարեն:

Նշված 40 իրավախախտումների վերաբերյալ ժամանակ առ ժամանակ Դիտորդական խումբը ընթացիկ հաշվետվություններով դիմել է ՀՀ ոստիկանությանը, որոնց կարող էք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններից:

Դիտորդական խումբը գտնում է, որ ցանկացած իրավախախտում կապված ձերբակալման առավելագույն 72 ժամի հետ չունի պարզաբանում, քանի որ դա ՀՀ քաղաքացու ՀՀ սահմանադրությամբ նախատեսված իրավունք է: Դիտորդական խումբը չի ընդունում այն բոլոր արդարացումները, որոնք բերվում են ոստիկանության կողմից. քննիչի կամ դատավորի կամ անուշադրության հետևանքով է խախտվել ձերբակալվածի տվյալ իրավունքը, թե այլ պատճառաբանությամբ: Դիտորդական խումբը առաջարկում է՝ համապատասխան ոստիկանության բաժնի պետերի կողմից ամբողջությամբ կիրառել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված 132 հոդվածի 2-րդ կետի պահանջները և 72 ժամը լրանալուց ձերբակալված անձին ազատ արձակել ՁՊՎ-ից:

## 5.2. Քննչական գործողությունների հետ կապված խախտումները

### Ժամկետների խախտումներով քննչական գործողություններ կատարելը

Ինչպես նախորդ բաժնում հիմք էինք ընդունել ձեռքբերված և փոխանցված անձանց ու ՁՊՎ տեղափոխելու բուն հիմնախնդիր հանդիսացող քննչական գործողությունները, այնպես էլ այժմ անդրադառնում ենք ձեռքբերված անձի հետ՝ խախտումներով կատարվող քննչական գործողություններին, որը կանոնակարգվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205<sup>1</sup> հոդվածի 1-ին կետի՝ «*հարցաքննությունը չի կարող տևել անընդմեջ 4 ժամ, իսկ անչափահասի, ինչպես նաև հոգեկան կամ այլ ծանր հիվանդությունով տառապող անձի հարցաքննությունը՝ 2 ժամից ավելի*», իսկ 2-րդ կետով՝ «*հարցաքննությունը թույլատրվում է շարունակել հարցաքննվող անձի հանգստի և սնվելու համար անհրաժեշտ առնվազն մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո: Օրվա մեջ հարցաքննության ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 8 ժամը, իսկ անչափահասների, ինչպես նաև հոգեկան կամ ծանր հիվանդությամբ տառապող անձի համար՝ 6 ժամը*»:

Քննչական գործողությունները կատարվում են օրվա ցանկացած ժամին, ցանկացած տևողությամբ, որը մտահոգիչ է: Միայն Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում գրանցվել է 8 ժամից ավելի քննչական գործողություններ կատարելու 130 դեպք:

2012թ-ի ընթացքում գրանցված առավելագույն 31 ժամ տևողությամբ կատարվող քննչական գործողությունները նվազել են 2013թ-ին և գրանցվել է մինչև 13 ժամ:

ՀՀ ոստիկանությունը չպետք է բավարարվի 2013թ-ի կատարած աշխատանքներով, և պետք է ընդունի, որ դա մարդու իրավունքների խախտում է և պետք է միջոցներ ձեռնարկի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջները պահպանելու և կիրառելու ուղղությամբ:

Նշված իրավախախտումներին կարող էք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում:

*Դիտորդական խումբը առաջարկում է հարցաքննությունը մնացած այլ քննչական գործողություններից չտարանջատել և հիմք ընդունել ՀՀ քր. դատ. օր-ի 205<sup>1</sup> հոդվածի պահանջը, ոչ միայն հարցաքննության այլ նաև ընդհանուր կատարվող քննչական գործողությունների համար և հիմք չընդունել, որ օրենսդիրը քննչական գործողությունների համար առավելագույն ժամկետ չի նախատեսել: Միաժամանակ պետք է առաջնորդվել Մարդու հիմնարար իրավունքների սկզբունքով և ցանկացած գործողություն չպետք է սահմանափակի նրա հանգստի և սնվելու իրավունքը:*

### **5.3. Կալանավորված անձանց նկատմամբ կատարվող խախտումները**

#### **Կալանավորված անձանց առանց բավարար հիմքերի ՁՊՎ ընդունելը.**

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսվում է «Կալանավորվածների պահելու վայրի տեղակայման տարածքից կալանավորված անձին ամեն օր փոխադրելու անհնարինության դեպքում, քննչական գործողություններ կատարելու և դատական քննությանը կալանավորվածների պահելու վայրերից դուրս կատարելու կապակցությամբ, քննիչի, դատախազի կամ դատավորի որոշմամբ կալանավորված անձը կարող է տեղափոխվել ձերբակալվածի պահելու վայր՝ մինչև 3 օր տևողությամբ», բայց որոշ դեպքերում դատաքննությանը մասնակցելու կամ քննչական գործողություններ կատարելու նպատակով, կալանավորված անձինք ընդունվում են ՁՊՎ գրությունների կամ դատաքննությանը մասնակցելու հայտերի հիման վրա:

Նշված խնդրի շրջանակներում Դիտորդական խումբը գրանցել է առաջընթաց: Ոստիկանության կողմից կատարվել է հրահանգավորում իր ենթակայության տակ գտնվող բաժիններին, օրենքի տարբը պահպանելու և առանց համապատասխան որոշումների կալանավորված անձանց ՁՊՎ չընդունելու ուղղությամբ:

*2012թ-ի հետ համեմատած, երբ երևույթը համատարժ բնույթ էր կրում, ներկայումս գրանցվել է միայն 5 ՁՊՎ-ներում (ՀՀ ոստիկանության Սիսիանի, Նաիրիի, Հրազդանի, Մարտունու և Տավուշի ՁՊՎ-ներ), որի վերաբերյալ Դիտորդական խումբը կարծում է, որ ոստիկանությունը անհրաժեշտ միջոցառումներ կձեռնարկի ամբողջությամբ արմատախիլ անել նշված իրավախախտումը:*

### **5.4. ՁՊՎ-ի վարչակազմի կողմից կատարվող խախտումները**

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների վարչակազմի կողմից կատարվող խախտումները տարաբնույթ են: Թերի կամ խախտումներով են կազմվում ձերբակալված անձանց անձնական գործերը, ՁՊՎ-ում գտնվող բոլոր գրանցամատյանները լրացվում են խախտումներով և ջնջումներով, հարազատներին իրազեկումը հեռախոսագանգի միջոցով ոչ պատշաճ է կատարվում, հանձնուքները ոչ միշտ են ընդունվում կամ ժամանակին չեն ընդունվում և այլն:

Դիտորդական խմբի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վարչակազմի կողմից կատարվող խախտումները որոշ դեպքերում միտումնավոր բնույթ են կրում, իսկ որոշ դեպքերում՝ մասնագիտական գիտելիքների պակաս է:

### Անձնական գործերի կազմման հիմնախնդիրները

Որոշ ՁՊՎ-ներում ձեռքակալված անձանց անձնական գործերը կազմվում են միայն անձին կալանավորելուց հետո, երբ նրան արդեն պետք է տեղափոխեն ՔԿՀ: Բայց ՁՊՎ-ների աշխատանքները կանոնակարգող ներքին կանոնակարգի թիվ 574-Ն որոշման 14 –րդ կետով, նախատեսվում է, որ յուրաքանչյուր ձեռքակալվածի համար ՁՊՎ-ում կազմվում է անձնական գործ:

2013թ-ի ընթացքում թերի կազմված անձնական գործեր արձանագրվել են ՀՀ ոստիկանության Մեղրիի, Ապարանի, Ախուրյանի, Սպիտակի, Թումանյանի, Վանաձորի և Վաղարշապատի ՁՊՎ-ներում:

Նշված իրավախախտումների վերաբերյալ կարող էք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում:

### Խախտումներով գրանցամատյանների լրացում

Դիտորդական խմբի ուսումնասիրությունները 2013թ-ի ընթացքում փաստել են, որ ՁՊՎ-ում առկա գրանցամատյանները լրացվում են խախտումներով:

Ձեռքակալված կամ կալանավորված անձը ՁՊՎ ընդունվելուց, ՔԿՀ տեղափոխվելուց, կամ ազատ արձակվելուց չեն նշվում օրերը կամ ժամերը, բուժօգնության նպատակով անձին խցից դուրս բերելուց <<Ձեռքակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում չի նշվում օրը կամ ժամը, գրանցամատյաններում ջնջում և փոխում են օրերը կամ ժամերը:

Նշված խախտումները գրանցվել են ՀՀ –ում գործող բոլոր ՁՊՎ-ներում և կարծում ենք, որ ոստիկանությունում համապատասխան միջոցներ պետք է ձեռնարկի վարչակազմի գիտելիքների բարձրացման և իրավախախտումները կանխելու ուղղությամբ:

Նշված իրավախախտումների վերաբերյալ կարող էք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում:

## ՁՊՎ-ում գտնվող անձանց հարազատներին

### հեռախոսագանգի միջոցով իրազեկում

ՁՊՎ-ների աշխատքնները կանոնակարգող ներքին կանոնակարգի թիվ 574-Ն որոշման 11-րդ հոդվածի պահանջներով <<ՁՊՎ-ի վարչակազմը պարտավոր է ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուս հիմնարկ տեղափոխելու մասին, կապի հնարավոր միջոցով տեղյակ պահել ձերբակալվածի ընտրած անձին>>:


Ներկայացվածի վերաբերյալ ունենք գրանցված առաջընթաց:

Դիտորդական խմբի միջնորդությամբ, ոստիկանության կողմից նշված գործառույթը կանոնակարգվել և տրվել է համապատասխան հանձնարարականներ այն պահպանելու ուղղությամբ: Ընդհանուր պատկերը համեմատելով 2012թ-ի և նախորդ տարիների հետ դրական է, բայց դեռ գրանցվել են ՁՊՎ-ներ, որտեղ գործառույթը չի պահպանվել: Դրանք են՝ ՀՀ ոստիկանության Ապարանի, Արարատի, Արտաշատի, Թալինի, Աշտարակի, Ճամբարակի և Վաղարշապատի ՁՊՎ-ներ:

Նշված խախտումների վերաբերյալ կարող եք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում:

*Դիտորդական խումբը առաջարկում է ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների վարչակազմի համար պարբերաբար կազմակերպել սեմինար-դասընթացներ ՁՊՎ-ների վարչակազմի համար՝ իրենց պարտականությունների, ձերբակալված և կալանավորված անձանց հետ վարվեցողության, առաջին բուժօգնության, ՀՀ օրենսդրության, միջազգային չափանիշների վերաբերյալ և մեծ ուշադրություն դարձնել ՁՊՎ-ի վարչակազմի կողմից կատարվող ցանկացած աշխատանքին:*

**ՁՊՎ-ում նախատեսված իրավունքներից օգտվելու վերաբերյալ վերլուծություն**



Ձեռքակալվելուց հետո անձինք ՁՊՎ-ներում ունեն մի շարք իրավունքներ՝ փաստաբանի հետ տեսակցելու, հարազատների հետ տեսակցության, հեռախոսազանգի, հանձնուր ստանալու, լոգանք ընդունելու և զբոսանքի:

Դիտորդական խումբը վերլուծության ենթարկելով հավաքագրված տվյալները՝ արձանագրել է, որ 2013թ-ի ընթացքում ՁՊՎ-ներում իրենց իրավունքներից օգտվել են՝ (ներառյալ Երևանի ՁՊՎ)

- Հարազատների հետ տեսակցությունից օգտվել են ընդհանուր պահված անձանց թվի 3124 12.16%
- Հեռախոսազանգի իրավունքից օգտվել են՝ 0.51%
- Հանձնուր ստացել են՝ 76.31%
- Լոգանքի իրավունքից օգտվել են՝ 12.64%
- Փաստաբանի հետ տեսակցել են 1431 ձեռքակալվածների՝ 23.1%
- Զբոսանքի հնարավորություն ունեցած 5185 անգամից օգտվել են՝ 65%

## ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը`

### ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ներում պահվող անձանց իրավունքների հետ կապված խախտումները

#### 5.1 Արգելանքի վերցնելու և ձերբակալելու իրավախախտումները

##### Արգելանքի վերցնելու ժամը չգրանցելը.

Դիտորդների խմբի տարեկան հաշվետվությունում նշվել է, որ Վ. Ա-ն և Ս. Թ-ն բերման են ենթարկվել ոստիկանության բաժին և ձերբակալվել, սակայն նրանց արգելանքի վերցնելու ժամը ոչ մի տեղ չի երևում:

2013թ. ընթացքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ որոշ դեպքերում անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելիս բերման ենթարկելու մասին արձանագրությունում արգելանքի վերցնելու ժամը չի նշվում: Այսինքն հետագայում անձին ձերբակալելիս հնարավոր չի լինում հաշվարկել նրան արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը` 72 ժամը:

Այս առումով ՀՀ ոստիկանության շտաբի կողմից համապատասխան հանձնարարական է տրվել ոստիկանության տարածքային բաժիններ` բերման ենթարկելու մասին արձանագրություններ կազմելիս խստորեն ղեկավարվել գործող օրենսդրությամբ (նշել բերման ենթարկելու վայրը, օրը, ամիսը, տարեթիվը, ժամը, բուրձն և հիմքը), ինչը տվել է իր դրական արդյունքը:

#### Հետախուզվող մեղադրյալին արգելանքի վերցնելուց

##### ձերբակալման արձանագրություն չկազմելը

ՀՀ Վճռաբեկ դատարանի ԼԴ/0197/06/08 նախադեպային որոշմամբ հետախուզվող մեղադրյալը, որի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, հայտնաբերելուց հետո անհապաղ պետք է տարվի դատարան: Նույն որոշմամբ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված <<անհապաղ>> հասկացությունն ըստ ՀՀ քր. դատ. օր-ի մեկնաբանվել է որպես ձերբակալման 72 ժամը:

ՀՀ քր.դատ.օր.-ի **128-րդ** հոդվածի համաձայն` ձերբակալումը անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող



մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար:

Պրակտիկայում հետախուզվող մեղադրյալները հայտնաբերվում և վարույթն իրականացնող մարմնին են հանձնվում հետաքննության մարմնի աշխատակիցների կողմից: Այդ կապակցությամբ կազմվում է անձին ոստիկանության բաժին բերման ենթարկելու մասին արձանագրություն, դրանում նշվում է անձին փաստացի արգելանքի վերցնելու ժամը, որ պահից էլ սկսում է 72 ժամի հաշվարկը:

Նման դեպքերում ձերբակալման արձանագրություն չկազմելը չի կարող որակվել որպես իրավունքի խախտում: Քրեադատավարական օրենսդրությունը քրեական հետապնդման մարմնին իրավունք է վերապահում ձերբակալել մեղադրյալին, միայն եթե մեղադրյալը խախտում է իր նկատմամբ կիրառված խափանման միջոցի պայմանները, հետևաբար կարելի է ասել, որ ՀՀ քր.դատ.օր.-ի 259-րդ հոդվածում հետախուզման հասկացության մեջ նշված <<...մեղադրյալին ձերբակալելն է...>> ձևակերպումն ինքնին չի ենթադրում հետախուզվող մեղադրյալի ձերբակալում, երբ բացակայում են դրա համար օրենքով նախատեսված դատավարական հիմքերը:

### **Խախտումներով լրացված ձերբակալման և բերման արձանագրություններ**

Քննչական և դատավարական գործողությունների կատարման արդյունքում կազմվող փաստաթղթերին ներկայացվող պահանջներն ամրագրված են քրեադատավարական օրենսդրությամբ: Անձի ձերբակալման ժամի կարևորությամբ պայմանավորված՝ բացի ձերբակալման արձանագրության մեջ նշում կատարելը, այդ մասին գրառում է կատարվում նաև ՁՊՎ համապատասխան մատյաններում այլ ծառայողի կողմից: Այս հանգամանքը ևս նպատակամղված է գործընթացը վերահսկելի դարձնելուն և իրավունքների խախտումները բացառելուն:

Գ.Ք-ին բերման ենթարկելու, անձնական խուզարկություն կատարելու և ձերբակալելու վերաբերյալ հաշվետվության մեջ նշված ժամերում հակասություններ չկան:

ՀՀ ոստիկանության բաժինների բերման ենթարկված անձանց մասին պարտադիր կարգով գրառում է կատարվում հերթապահ մասերում վարվող մատյաններում, մասնավորապես ֆիքսվում է անձին բերման ենթարկելու ժամը, կոնկրետ դեպքում Գ.Ք-ն բերման է ենթարկվել

11.04.2013թ. ժամը 08<sup>00</sup>-ին, որից հետո 08<sup>05</sup>-ին ձերբակալվել է և 08<sup>10</sup>-ին ենթարկվել է խուզարկության ու ընդունվել ՁՊՎ, սակայն Հրագդանի բաժնի ՔՀ բաժնի օպեր-լիազոր, ոստիկանության լեյտենանտ Ա.Ա.-ն, ձերբակալման արձանագրությունում սխալմամբ ժ.08<sup>05</sup> գրելու փոխարեն նշել է 09<sup>05</sup>, որի վերաբերյալ խմբի ընթացիկ հաշվետվությանը տրվել է սպառնիչ մեկնաբանություն:

Բերման ենթարկելը և ձերբակալումը դրանք դատավարական գործողություններ են, որոնք ավարտվում են անձին հետաքննության կամ վարույթն իրականացնող մարմին բերելով ու համապատասխան արձանագրություն կազմելով, դրանք ժամանակատար չեն և կարող են իրականացվել անձնական խուզարկության հետ միաժամանակ կամ աննշան ժամանակային տարբերությամբ:

Հաշվետվության մեջ նշվածի՝ ...«ձերբակալման արձանագրության մեջ բացակայում էր ձերբակալողի և ձերբակալվածի արձանագրությունները» վերաբերյալ հայտնվում է, որ նման միայն մեկ դեպք է արձանագրվել (ոստիկանության Արտաշատի բաժնում): Այդ կապակցությամբ կատարված ծառայողական քննության արդյունքում պարզվել է, որ Ռ.Հ.-ն որպես հետախուզվող բերման է ենթարկվել և ձերբակալվել, սակայն ձերբակալման արձանագրությունը չի ստորագրվել ձերբակալողի և ձերբակալվողի կողմից, ինչը շտապողականության և մեխանիկական վրիպում թույլ տալու արդյունք է:

Այսուհանդերձ, վերոգրյալը թեպետ ձևականորեն ձերբակալման արձանագրությանը ներկայացվող պահանջների և ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելու կարգի խախտում է, սակայն տվյալ դեպքում ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու «ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշման 7-րդ կետով սահմանված հիմքերը առկա են եղել, քանի որ Ռ.Հ.-ի նկատմամբ դատարանի կողմից կայացվել է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ որոշումը:

Այսպիսով, Ռ.Հ.-ի պարագայում, ՁՊՎ ընդունելու հիմքը (դատարանի վերոհիշյալ որոշումը) առկա է և ձերբակալման արձանագրության անհրաժեշտությունը չի եղել:

### **Ձերբակալումից հետո ձերբակալվածներին ու ՁՊՎ ընդունելը**

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում անձանց ոստիկանության բաժիններ բերման ենթարկելուց և ձերբակալելուց հետո նրանց

մասնակցությամբ կատարվում են մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ այդ պատճառով էլ վերջիններս ուշ են տեղափոխվում ՁՊՎ-ներ:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205<sup>1</sup>-րդ հոդվածը սահմանում է միայն *հարցաքննության որպես քննչական գործողության* առավելագույն տևողությունը, իսկ մյուս քննչական կամ դատավարական գործողությունների կատարման համար օրենսդիրը առավելագույն տևողություն չի սահմանում:

Ստորև ներկայացվում է երկու օրինակ.

Գ.Գ-ն ոստիկանության Կենտրոնական բաժին բերման է ենթարկվել 04.12.2013թ. ժամը 11<sup>30</sup>-ին, երեք ժամ անց վերջինս ազատ է արձակվել, իսկ նախապատրաստված նյութերն ուղարկվել են Կենտրոնի քննչական բաժին: Նույն օրը ժամը 18<sup>10</sup>-ին վերջինս հրավիրվել է Կենտրոնի քննչական բաժին և ձերբակալվել է: Հարուցված քրեական գործի շրջանակներում Գ.Գ-ի մասնակցությամբ կատարվել են մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ՝ խուզարկվել են Երևան քաղաքի Կիևյան և Թումանյան փողոցներում գտնվող թվով 2 բնակարաններ, որից հետո 05.12.2013թ. ժամը 05<sup>20</sup>-ին Գ.Գ-ն տեղափոխվել է ՁՊՎ: Վերոգրյալի վերաբերյալ դիտորդական խմբի ընթացիկ հաշվետվությունը տրվել է մեկնաբանություն:

Հ.Կ-ն 27.05.2013թ. ժամը 06<sup>30</sup>-ին չի ձերբակալվել, ինչպես նշված է հաշվետվությունում, այլ տվյալ ժամին գողություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Շենգավիթի բաժին, որից հետո բաց է թողնվել: Քրեական գործով մի շարք քննչական և դատավարական գործողություններ կատարելուց հետո նույն օրը ժամը 17<sup>15</sup>-ին Հ.Կ-ն կրկին բերվել է ոստիկանության բաժին ու ձերբակալվել: Կասկածյալը հարցաքննվելուց հետո ժամը 22<sup>35</sup>-ին հանձնվել է ոստիկանության բաժնի հերթապահ մաս՝ ՁՊՎ տեղափոխելու համար: Հ.Կ-ն ՁՊՎ է ընդունվել 28.05.2013թ. ժամը 01<sup>10</sup>-ին:

### **Ձերբակալվածի կարգավիճակում գտնվող անձանց բերման ենթարկելու վերաբերյալ**

Հայտնվում է, որ դիտորդական խմբի կողմից ընթացիկ հաշվետվությունով ներկայացված այն փաստը, որ ձերբակալվածի կարգավիճակում գտնվող անձին մի հիմնարկից մյուս հիմնարկ տեղափոխելիս նորից կազմվում է բերման ենթարկելու արձանագրություն՝ քննարկվել է ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և իրավաբանական վարչություններում և տրվել է հետևյալ մեկնաբանությունը.

Ձերբակալված անձին մեկ վայրից մեկ այլ վայր տեղափոխելու համար բերման ենթարկելը իրավաչափ չէ, ուստի նմանատիպ խախտումները բացառելու համար ՀՀ ոստիկանության շտաբի կողմից 10.07.2013թ. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններ ուղարկվել է համապատասխան շրջաբերական, որով հանձնարարվել է ձերբակալվածի կարգավիճակում գտնվող անձին մի հիմնարկից մյուս հիմնարկ տեղափոխելիս խստորեն առաջնորդվել վերը նշված իրավական ակտերի պահանջներով: Նշված տեղափոխումը չդիտել որպես բերման ենթարկում և չկազմել բերման ենթարկելու արձանագրություններ:

### **Անձին ապօրինի անագատության մեջ պահելը**

Վ.Մ-ն 11.08.2013թ. ժամը 06<sup>10</sup>-ին գողության փորձ կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել ոստիկանության Վայքի բաժին, 07<sup>05</sup>-ին ներկայացվել է քննիչին, սակայն, քննիչի կողմից նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջինիս գործողություններին իրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է կատարել դեպքի վայրի զննություն, Վ.Մ-ն բաց է թողնվել, նրան պարզաբանվել է ժամը 12<sup>30</sup>-ին ոստիկանության բաժին ներկայանալու պարտավորության մասին: Վ.Մ-ն ձերբակալվել է 11.08.2013թ. ժամը 12<sup>45</sup>-ին, ուստի 14.08.2013թ. ժամը 10<sup>15</sup>-ին, երբ դուրս է բերվել խցից դատարան տեղափոխվելու համար, դեռևս ձերբակալման համար սահմանված 72 ժամը լրացած չի եղել:

Ա.Ա-ին և Հ.Ա-ին օրենքով ձերբակալման համար նախատեսված 72 ժամից ավելի ՁՊՎ-ում պահելու վերաբերյալ ՀՀ ոստիկանության ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի միջնորդության հիման վրա քննչական գլխավոր վարչությունում կատարվել են ծառայողական քննություններ: Ծառայողական քննություններով հիմնավորվել է քննիչների կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հանգամանքը, սակայն նկատի ունենալով, որ կալանավորման միջնորդության քննարկման համար ուշացումով դատարան տեղափոխելը պայմանավորված է եղել բազմադրվագ գործով մի շարք անհետաձգելի քննչական գործողություններ կատարելու հետ, ուստի ծառայողական քննությունների արդյունքներով քննիչները նախազգուշացվել են:

## 5.2 Քննչական գործողությունների հետ կապված խախտումները Ժամկետների խախտումներով քննչական գործողություններ կատարելը

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հարցաքննության համար, որպես քննչական գործողության, սահմանել է առավելագույն՝ ժամանակ: Չորս ժամ /երկու ժամ/ անընդմեջ ընթացող հարցաքննությունը պետք է ընդհատվի և կարող է շարունակվել անձին հանգստի և սնվելու համար անհրաժեշտ մեկ ժամ ընդմիջում տրամադրելուց հետո:

Նշված դրույթը բնավ չի ենթադրում, որ բացի հարցաքննությունից, մյուս քննչական կամ դատավարական գործողությունների կատարման պարագայում դրանց կատարմանը մասնակցող անձանց, անկախ դատավարական կարգավիճակից, չեն տրվում ընդմիջումներ՝ հանգստի և սնվելու համար:

Ի տարբերություն հարցաքննության՝ մյուս քննչական կամ դատավարական գործողություններն տևական կատարում չեն պահանջում, չեն առաջացնում նաև անձի հոգեֆիզիոլոգիական լարվածություն, հետևաբար նաև հոգնածություն, ինչպես հարցաքննության պարագայում:

Դիտորդական խմբի կողմից արձանագրված դեպքերի կապակցությամբ կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ գրեթե բոլոր դեպքերում ձերբակալվածները կասկածվել են բազմադրվագ հանցագործությունների կատարման մեջ, հիմնականում նրանց վերագրվել է հանցանքի կատարումը մեկից ավելի հանցակիցների հետ, ուստի վարույթն իրականացնող մարմինը ՀՀ քր. դատ. օր-ի 129-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները ապահովելու և 72 ժամվա ընթացքում մեղադրանք առաջադրելու և կալանավորման միջնորդության քննարկման համար ձերբակալվածին դատարան տանելու նպատակով հարցաքննությունից բացի կատարում է նաև մի շարք դատավարական այլ գործողություններ, որոնց տևողությունը իրավական որևէ հիմքով չի սահմանափակվում:

Դիտորդական խմբի դիտարկման համաձայն, բոլոր դեպքերում առավելագույն տևողությամբ կատարված քննչական գործողությունները չեն գերազանցել 13 ժամը, ինչը նշանակում է, որ բացի կասկածյալի հարցաքննությունից, վերջինիս մասնակցությամբ կարող էին առավելագույնը կատարվել մեկ-երկու քննչական կամ դատավարական գործողություններ:

### 5.3 Կալանավորված անձանց նկատմամբ կատարվող խախտումներ

#### *Կալանավորված անձանց առանց բավարար հիմքերի ՁՊՎ ընդունելը*

Դիտորդների խմբի կողմից ներկայացված գրությունների քննարկումներով պարզվել է, որ որոշ դեպքերում քննչական գործողություններ կատարելու կամ դատավորների կողմից նշանակված դատական նիստերին կալանավորների մասնակցությունն ապահովելու նպատակով կալանավորված անձինք ՁՊՎ են տեղափոխվում քննիչների կամ դատավորների գրությունների հիման վրա, որը կալանավորվածին ՁՊՎ ընդունելու և պահելու իրավական հիմք չի հանդիսանում:

Նշված խախտումը վերացնելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի կողմից 2013թ. ոստիկանության մարզային վարչությունների ղեկավարներին համապատասխան հանձնարարական է տրվել խստորեն առաջնորդվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ»-ի 7-րդ կետի պահանջներով՝ կալանավորվածներին ՁՊՎ ընդունել քննիչի, դատախազի կամ դատավորի որոշման հիման վրա:

#### **ՁՊՎ-ի վարչակազմի կողմից կատարվող խախտումները**

ՀՀ ոստիկանության ՁՊՎ-ների վարչակազմի կողմից ձերբակալվածների անձնական գործերը թերի և խախտումներով կազմելու, ՁՊՎ-ի գրանցամատյանները խախտումներով և ջնջումներով լրացնելու, հարազատներին հեռախոսազանգի միջոցով իրազեկումը ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ, հայտնում ենք, որ դրանք վերացնելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի կողմից ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ղեկավարներին համապատասխան հանձնարարականներ են տրվել խստորեն առաջնորդվել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ»-ի պահանջներով, ինչպես նաև ոստիկանության վերադաս ծառայությունների կողմից պարբերաբար ուսումնասիրվում է ՁՊՎ-ների գործունեությունը և վարչակազմերին ցուցաբերվում գործնական-մեթոդական օգնություն՝ վերջիններիս մասնագիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: ՁՊՎ-ներում պահվող անձանց հարազատներին հեռախոսազանգի միջոցով

իրագրելու վերաբերյալ 26.04.2013թ. շրջաբերական հանձնարարական է տրվել ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչությունների ղեկավարներին՝ խստորեն առաջնորդվել իրավական ակտերի պահանջներով և անձին ՁՊՎ ընդունելիս կամ այլ հիմնարկ տեղափոխելիս անհապաղ կապի հնարավոր միջոցով տեղյակ պահել ձերբակալվածի կամ կալանավորվածի ընտրած անձին ու այդ մասին կազմել տեղեկանք, այն վավերացնելով ՁՊՎ ծառայողի և պահվող անձի ստորագրությամբ, որը դրվում է անձնական գործի մեջ:

Նշված գործառնությունները չկատարելու կամ ոչ լիարժեք կատարելու համար կատարվել են ծառայողական քննություններ և թերացած ծառայողները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության (ոստիկանության Ապարանի, Աշտարակի, Արարատի, Արտաշատի, Ճամբարակի, Վաղարշապատի և Արմավիրի բաժիններ):

### **ՁՊՎ-ում պահված անձանց իրավունքները**

ՀՀ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահված անձանց վերապահված իրավունքներից օգտվելու վերաբերյալ կատարվել է ՁՊՎ-ներից ներկայացված 2013թ. տարեկան հաշվետվությունների վերլուծություն, որի արդյունքում ներկայացվում է հետևյալ վիճակագրությունը.

- ✓ ՁՊՎ-ներում 2013թ. ընթացքում պահված 4063 անձանցից (ներառյալ Երևանի ՁՊՎ), հարազատների հետ տեսակցության իրավունքից օգտվել են 505 անձինք (12.4%-ը):
- ✓ Հեռախոսազանգի իրավունքից օգտվելու դեպքեր չեն գրանցվել, քանի որ ՁՊՎ-ներում պահված անձանց կողմից տեսակցությունից հրաժարվելու և այն 10 րոպե տևողությամբ մեկ հեռախոսագրույցով փոխարինելու վերաբերյալ գրավոր դիմումներ չեն ստացվել:

Միաժամանակ հայտնվում է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին տրվել են համապատասխան հանձնարարականներ նմանատիպ դիմումներ ներկայացնելու դեպքում համաձայն ՀՀ կառավարության 05.06.2008թ. թիվ 574-ն որոշմամբ հաստատված «ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգ»-ի 65-րդ և 66-րդ կետերի՝ կազմել հեռախոսազանգից օգտվելու ժամանակացույց:

- ✓ ՁՊՎ-ներում պահվող անձանց թույլատրվում է փաստաբանի հետ տեսակցել անարգել և առանց դրանց թվի սահմանափակման, փաստաբանի կողմից համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում:
- ✓ Լոգանքի և զբոսանքի հնարավորություն տրվում է ՁՊՎ-ներում պահվող բոլոր անձանց՝ ըստ օրվա կարգացուցակի:



## 5.ԳԼՈՒԽ

### Բուժզննության և բուժօգնության հետ կապված խախտումների վերլուծություն

ՁՊՎ-ում պահվող անձի բուժզննությունը և բուժօգնությունը տվյալ բնագավառում ամենակարևոր հիմնախնդիրներից մեկն է:

Ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է, որ ՀՀ-ում գործող մարզային բոլոր ՁՊՎ-ներում արտաքին զննությունը իրականացվում է հերթապահ մասի պետի կամ հերթապահ ոստիկանի կողմից, իսկ անհրաժեշտության կամ գանգատներ լինելու դեպքում հրավիրում են շտապ օգնություն, իսկ Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ում նշված գործառույթը իրականացնում են բուժակները, ովքեր համապատասխան գրանցամատյանում կարող են կատարել նմանատիպ գրառում՝ <<ձախ ձեռքի ազդրի վրա կան վնասվածքներ>>:

Տվյալ գործառույթը նման ձևաչափով իրականացնելը ընդունելի չէ, որովհետև տվյալ ոստիկանները չունեն համապատասխան կրթություն և մասնագիտացված չեն բուժզննության սկզբունքներին և չեն կարող որոշել, թե որ դեպքում է անհրաժեշտ հրավիրել բժիշկ:

ՁՊՎ-ներում բուժօգնությունը ցուցաբերվում է հրավիրված շտապօգնության բժիշկների կողմից: Դիտորդական խմբի ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է, որ

- Որոշ դեպքերում կամ հրավիրված բժիշկները համապատասխան գրառումներ չեն կատարում <<Ձերբակալված անձանց բուժօգնության կամ բուժզննության>> գրանցամատյանում ցուցաբերած բուժօգնության վերաբերյալ:
- Գրանցամատյաններում գրառումները կատարում են օտար լեզվով կամ անհասկանալի ձևագրով՝ խախտելով <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ կետի պահանջները:
- Հայտնաբերվել են դեպքեր, երբ հրավիրված բժիշկը նշել է, որ համապատասխան հետազոտություն անցնելու անհրաժեշտություն կա բուժհաստատությունում, սակայն որոշ դեպքերում որևէ քայլ չի ձեռնարկվել այն ապահովելու համար:

Դիտորդական խումբը տվյալ հիմնախնդրի վերաբերյալ ընթացիկ հաշվետվություններով դիմել էր ինչպես ՀՀ ոստիկանությանը, այնպես էլ ՀՀ Առողջապահության նախարարությանը, որոնց կարող էք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում:

Դիտորդական խմբի 2013թ-ի ուսումնասիրությունների արդյունքները հետագոտելով ունենք հետևյալ պատկերը՝

Ընդհանուր պահված անձանց քանակը	ՀՀ մարզային ՁՊՎ-ներ		Երևանի ՁՊՎ
	կայանավոր	ձերբակալված	ձերբակալված
	1693	712	719
ՁՊՎ ընդունվելուց և քննչական գործողություններից հետո բուժօգնություն անցած անձանց քանակը	2568		727
Բուժօգնություն ստացած անձանց քանակը	271		275
Մարմնական վնասվածքներով ՁՊՎ ընդունված անձանց քանակը	106		236
Մարմնական վնասվածքների պատճառով բուժօգնություն ստացած անձանց քանակը	61		138
Ըստ իրենց բանավոր խոսքի ունեցել են առողջական խնդիրներ	229		169
Հոգեկան և սուր վարակիչ հիվանդություններով ՁՊՎ ընդունվել են	3		2

Վերլուծելով հետագոտության արդյունքները նկատում ենք, որ ՀՀ մարզերում գործող ՁՊՎ-ներում պահված ձերբակալվածները 712 են, իսկ Երևանի ՁՊՎ-ում՝ 719: Եթե համեմատություն իրականացնենք ձերբակալվածների թվով ստացված բուժօգնության հետ նկատում ենք, որ ՀՀ-ում գործող ՁՊՎ-ներում և Երևանի ՁՊՎ-ում պատկերը նույնն է: ՁՊՎ-ներում մեծամասամբ բուժօգնություն է ցուցաբերվում հենց ձերբակալվածներին, քանի որ գտնվում են ծանր հոգեվիճակում, ունենում են սթրեսային վիճակ: Ընդհանուր բուժօգնության հիմնախնդիրները ուսումնասիրելով նկատում ենք, որ գրանցված են՝ գլխացավ, կրծքավանդակի ծակոցներ, պարանոցի լարվածություն, ընդհանուր լարվածություն, ազրեսիա, արյան ճնշման տատանում: Նմանատիպ բուժօգնությունները Երևանի ՁՊՎ-ում կազմում է 66.6%, իսկ մարզային ՁՊՎ-ներում 71.9%: Մնացած Երևանի ՁՊՎ-ում 33.4% և մարզերում 28.1% դա մարմնական վնասվածքների պատճառով ստացած բուժօգնություններն են:

Հետագոտության արդյունքում արձանագրվել է՝ որոշ ՁՊՎ-ներում անձը գանգատներ չի ունեցել, բայց ցավազրկող ներարկումներ է կատարվել:

Ինչպես ներկայացրել էինք Խոշտանգումներ բաժնում՝ մարմնական վնասվածքները մարզային ՁՊՎ-ներում ոչ միշտ են գրանցվում:

ՀՀ մարզային ՁՊՎ-ներում պահված ձեռքարկվածների 12.36% ՁՊՎ են ընդունվել մարմնական վնասվածքներով, իսկ Երևանի ՁՊՎ-ում՝ 32.8%:

Հետազոտության արդյունքներում նշված մարմնական վնասվածքներից ստացած բուժօգնության տվյալները ուսումնասիրելով թե՛ մարզային ՁՊՎ-ներում և թե՛ Երևանի ՁՊՎ-ում 50%-ի մոտ մարմնական վնասվածքները եղել են ծանր, որի պատճառով ստացել են բուժօգնություն:

Իսկ ինչ վերաբերվում է ՁՊՎ ընդունված անձանց բանավոր խոսքին ունեցած առողջական խնդիրներին դա գովելի է, որ գրառումները շատացել են, բայց նկատում ենք, որ գանգատներին ընթացք չի տրվում վարույթն իրականացնող մարմնի կողմից և հետևաբար գրառումները կրում են ձևական բնույթ:

2013թ-ի ընթացքում Դիտորդական խումբը առաջընթաց է գրանցել, որ իր միջնորդությամբ ոստիկանության կողմից ձեռնարկվել են միջոցառումներ և ՁՊՎ-ում օգտագործվող դեղորայքի ցանկը վերանայվել է: Նախկին 32 անուն դեղորայքը փոխարինվել է առաջին բուժօգնության համար նախատեսված դեղորայքով: Նախկինում առկա դեղորայքի առկայությունը ՁՊՎ-ում հիմնավորված չէր, քանի որ ՁՊՎ-ի վարչակազմը բուժօգնություն տրամադրելու ոչ մասնագիտական գիտելիք ուներ և ոչ էլ լիազորված էր դրանք տրամադրելու համար:

Այս ամենի հետ մեկտեղ Դիտորդական խմբի ուսումնասիրությունների արդյունքում՝ եղել են ՁՊՎ-ներ Վարդենիսի, Նաիրիի, Ճամբարակի, Հրազդանի և Ախուրյանի, որտեղ առաջին բուժօգնության դեղորայքի մեջ էլ են արձանագրվել ժամկետանց և եղել են ՁՊՎ-ներ Արարատի և Ճամբարակի, որտեղ նույնիսկ այդ դեղորայքն է բացակայել: Բայց տվյալ փաստերը արձանագրելուց հետո, խնդիրները լուծվել են:

Դիտորդական խմբի առաջընթացներից է նաև այն հանգամանքը, որ ոստիկանության կողմից մշակվել է ժամկետանց դեղորայքի ոչնչացման մեխանիզմ, որը նախորդ 7 տարիների ընթացքում չի եղել:

Այս ձեռքբերումներին և մնացած բուժօգնության և բուժօգնության հիմնախնդիրներին կարող էք ծանոթանալ ընթացիկ հաշվետվություններից:

*Դիտորդական խումբը առաջարկում է ուղղորդվել ՀՀ ոստիկանության համակարգում գործող ՁՊՎ-ների ներքին կանոնակարգի 13 կետի պահանջներով, այն է՝ «ձերբակալվածի մոտ մարմնական վնասվածքներ կամ ակնհայտ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու կամ առողջության վերաբերյալ գանգատներ լինելու դեպքում ոստիկանության մարմնի հերթապահն հրավիրում է բուժաշխատող >> և թույլ չտալ, որպեսզի ՁՊՎ-ի վարչակազմը կատարի արտաքին զննություն և մարմնական վնասվածքներ հայտնաբերելու դեպքում չկատարի գրառումներ և չկազմի արձանագրություն :*

## ՀՀ ոստիկանության մեկնարանությունը՝

### **Բուժզննության և բուժօգնության հետ կապված խախտումների վերլուծություն**

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումներում անձանց ՁՊՎ ընդունելիս արտաքին զննությունը կատարվում է հերթապահ մասի պետի կամ ՁՊՎ ոստիկանի կողմից, իսկ ակնհայտ հիվանդության, գանգատներ լինելու կամ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու դեպքում հրավիրվում են շտապ օգնության բուժաշխատողներ, որոնց կողմից իրականացվում է համապատասխան բուժօգնություն և արդյունքների մասին գրառումներ են կատարվում ձև 12 գրանցամատյանում:

Երևան քաղաքի ՁՊՎ-ում նշված գործառույթն իրականացվում է ՁՊՎ-ի կրտսեր տեսուչ բուժակների կողմից, ովքեր ունեն համապատասխան բժշկական կրթություն և լիցենզիա, իսկ գրանցամատյանում մեկ անգամ կատարված սխալ գրառումը բավարար հիմք չէ բնորոշելու նշված բուժաշխատողների կրթվածության աստիճանը:

Մարմնական վնասվածքի բնույթից /ծանրության աստիճանից/, ինչպես նաև անհրաժեշտությունից ելնելով բոլոր ՁՊՎ-ներում հրավիրվում են շտապ օգնության բժշկ-մասնագետներ: Հրավիրված շտապօգնության բուժաշխատողները բուժօգնության վերաբերյալ հայերեն լեզվով գրառումներ են կատարում ձև 12 գրանցամատյանում: Երբ հրավիրված բժշկի կողմից նշվում է, որ համապատասխան հետազոտություն անցնելու անհրաժեշտություն կա բուժհաստատությունում, ապա այդ պահանջը կատարվում է, եթե ձերբակալված կամ կալանավորված անձը բուժզննություն անցնելուց անմիջապես հետո ՁՊՎ-ից չի տեղափոխվում:

Հարկ է նշել նաև, որ ՁՊՎ ընդունվող անձանց մոտ ակնհայտ հիվանդության նշաններ կամ գանգատներ չլինելու դեպքում համապատասխան գրառումներ են կատարվում ձև 12 գրանցամատյանում, որը վավերացվում է անձի կողմից, իսկ հետագայում գանգատներ լինելու դեպքում նրանց տրվում է անհրաժեշտ դեղամիջոց և դրա վերաբերյալ նույնպես նշումներ են կատարվում նշված գրանցամատյանում, որն էլ հավանաբար դիտորդների մոտ կարծիք է առաջացրել, թե գրառումները ձևական բնույթ են կրում:

Անդրադառնալով նշված ոլորտին նշենք նաև, որ դիտորդների խմբի միջնորդությամբ և ՀՀ ոստիկանության շտաբի առաջարկությամբ կատարվել են հետևյալ բարեփոխումները.

- ✓ ՀՀ ոստիկանության բժշկական վարչության կողմից վերանայվել է ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձեռքարկվածներին պահելու վայրերում պահվող անձանց առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար նախատեսված դեղորայքի ցանկը, ինչի կապակցությամբ 08.05.2013թ. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին տրվել է համապատասխան հանձնարարական: Արդյունքում ՁՊՎ-ներում բացառվել է մասնագիտական մոտեցում պահանջող դեղորայքի առկայությունը և դեղարկը համալրվել է միայն առաջին օգնության դեղորայքով:
- ✓ ՁՊՎ-ներում առանձնացվել են ախտահանիչ նյութերի պահման համար տեղեր /դեղորայքի հետ չշփոթելու համար/ և դրանք օգտագործվում են ըստ բուժվարչության կողմից տրված մեթոդական ցուցումի:
- ✓ Տեղերում կազմավորվել են հանձնախմբեր, կազմվել արձանագրություն՝ ՁՊՎ-ներում առկա ժամկետանց դեղորայքը ոստիկանության բուժվարչության պոլիկլինիկայի դեղատուն տեղափոխելու և ոչնչացնելու նպատակով:
- ✓ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին 13.07.2013թ. հանձնարարական է տրվել նաև, որ ՁՊՎ ընդունվող ձեռքարկված և կալանավորված անձանց բուժօգնությունը կատարեն միայն բուժաշխատող ծառայողները:
- ✓ Առաջարկվել է ձեռքարկված և կալանավորված անձանց բժշկական զննության արդյունքների գրանցումն իրականացնել բացառապես օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կանոնակարգի թիվ 12 հավելվածով նախատեսված գրանցամատյանում և ձեռքարկված կամ կալանավորված անձի անձնական գործում:

Համապատասխան հսկողություն իրականացնել բուժօգնության արդյունքների գրանցումների լրիվության և ճշգրտության նկատմամբ:

Ձեռքարկված և կալանավորված անձանց մոտ մարմնական վնասվածքներ հայտնաբերելու դեպքում, օրենսդրությամբ սահմանված կարգով անհապաղ իրազեկել վարույթն իրականացնող մարմնին:

## 6. ԳԼՈՒԽ

### ՁՊՎ-ների պահման պայմանների մասին վերլուծություն

Ուսումնասիրելով ՁՊՎ-ների պահման պայմանները՝ Դիտորդական խումբը գրանցել է որոշ առաջընթացներ, սակայն կան թերություններ և բացթողումներ, մասնավորապես՝

- Լուրջ խնդիր է հանդիսանում ՁՊՎ-ի խցերի օդափոխության հարցը, որը ներկայումս կատարվում է պատուհանները բացելու միջոցով: ՀՀ ոստիկանության Միսիանի, Ճամբարակի և Տավուշի ՁՊՎ-ներում պատուհանները ընդհանրապես չեն բացվում, իսկ որոշ ՁՊՎ-ներում պատուհանները բացվում են աստիճանի օգնությամբ: Նշենք, որ դրանով հարցը ոչ մի կերպ չի լուծվում, քանի որ միայնակ հերթապահություն կատարող ոստիկանը երբեք ձեռքով չի կարողանում բացել զանգվածային թողնի և օդափոխության հարց չի լուծի:
- ՁՊՎ-ում պահվող անձանց սնունդը շատ ՁՊՎ-ներում տրամադրվում է օրական մեկ անգամ, այն էլ ոչ բավարար, քանի որ ներկայումս սննդի համար նախատեսված գումարի չափը չի բավականացնում:
- 7 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Գորիսի, Արարատի, Աշտարակի, Իջևանի, Թալինի, Տավուշի և Նոյեմբերյանի ՁՊՎ-ներ*) սանհանգույցները չեն ախտահանվում և գտնվում են հակասանիտարահիգիենիկ վիճակում:
- 8 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Գորիսի, Երևանի, Արարատի, Արտաշատի, Ախուրյանի, Իջևանի, Նաիրիի և Թալինի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է, որ որոշ խցերի ջրի ծորակները չեն գործում:
- 10 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Ապարանի, Արարատի, Արտաշատի, Աշտարակի, Ախուրյանի, Եղեգնաձորի, Ճամբարակի, Նաիրիի և Թալինի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է խցերում կեղտոտ սպիտակեղեն:
- 7 ՁՊՎ-ների (*ՀՀ ոստիկանության Ապարանի, Արթիկի, Ախուրյանի, Դիլիջանի, Ճամբարակի, Նաիրիի և Սպիտակի ՁՊՎ-ներ*) լոգարաններում տաք ջուր հնարավոր չէ ապահովել ջրի բաք և մղիչ պոմպ չունենալու պատճառով:
- 3 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Արարատի, Գավառի և Նոյեմբերյանի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է հիգիենիկ թղթի բացակայություն:
- 8 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Միսիանի, Երևանի, Արտաշատի, Արթիկի, Դիլիջանի, Հրազդանի, Մասիսի և Սևանի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է խոնավություն:

- 12 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Մեղրիի, Արարատի, Աշտարակի, Ախուրյանի, Դիլիջանի, Եղեգնաձորի, Ճամբարակի, Կոտայքի, Մասիսի, Նաիրիի, Թումանյանի և Վանաձորի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է փոշոտ վիճակում գտնվող բուժսենյակները:
- 11 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Ապարանի, Արտաշատի, Դիլիջանի, Իջևանի, Եղեգնաձորի, Ճամբարակի, Կոտայքի, Մարտունու, Տավուշի, Թումանյանի, Վարդենիսի և Նոյեմբերյանի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է թույլ արհեստական և բնական լուսավորություն:
- 3 ՁՊՎ-ներում (*ՀՀ ոստիկանության Արարատի, Աշտարակի և Սևանի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է կեղտոտ վիճակում գտնվող ճաշասենյակներ:
- 7 ՁՊՎ-ում (*ՀՀ ոստիկանության Ախուրյանի, Արարատի, Արտաշատի, Մասիսի, Նաիրիի, Վաղարշապատի և Նոյեմբերյանի ՁՊՎ-ներ*) արձանագրվել է ընդհանուր կեղտոտ, փոշոտ վիճակ:

Ներկայացվածների վերաբերյալ ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ Ընթացիկ հաշվետվություններում:

### *ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը՝*

#### **ՁՊՎ-ներում անձանց պահման պայմանների մասին**

ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա բաժինների հերթապահ մասերի և Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ների գործունեությունը 2012թ. նոյեմբերի 25-ից ղեկավարվում է ՀՀ ոստիկանության շտաբի կողմից: 2013թ. ՁՊՎ-ների գործունեությունում գրանցվել են մի շարք առաջընթացներ կապված անձանց ընդունելու և պահելու, նյութակենցաղային ապահովման, սննդի, բուժապասարկման և ձերբակալման ընթացքում նախատեսված այլ իրավունքների ապահովման հետ:



Դիտորդների խմբի կողմից նշվել է, որ ոստիկանության Սիսիանի, Ճամբարակի և Տավուշի բաժինների ՁՊՎ-ների պատուհանները չեն բացվում և օդափոխություն չի իրականացվում: Հայտնվում է, որ նշված բաժիններից ներկայումս չեն բացվում միայն Սիսիանի բաժնի ՁՊՎ-ի խցերի պատուհանները, որոնք կառուցման ժամանակից այդպես են տեղադրվել, սակայն միջոցներ են ձեռնարկվում դրանք ձևափոխելու կամ նորերով փոխարինելու ուղղությամբ: Իսկ որոշ ՁՊՎ-ների պատուհանները դրսից՝ աստիճանի միջոցով բացվելու հանգամանքը խոչընդոտ չի հանդիսանում այն կարիքն առաջանալու ժամանակ բացելուն, քանի որ ՁՊՎ-ներում հերթապահ ոստիկանից բացի հերթապահ մասում ծառայության են լինում ավագ-տեսուչ հերթապահը և նրա օգնականը, որոնք հարկ եղած դեպքում մասնակցում են ՁՊՎ-ում իրականացվող ծառայություններին:

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 15-ի թիվ 587-Ն որոշմամբ ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու վերաբերյալ հարցը ՀՀ ոստիկանության շտաբի առաջարկությամբ քննարկվել է ֆինանսաբյուջետային վարչությունում, որի արդյունքում ՁՊՎ-ներում պահվող անձանց անվճար սննդով ապահովելու համար մեկ անձի հաշվով օրապահիկի նվազագույն չափաբաժինն ավելացվել է և սահմանվել է 690, իսկ հղի կանանց, կերակրող մայրերի և անչափահասների համար 790 դրամ:

Ինչ վերաբերվում է ՁՊՎ-ների ոչ բավարար սանիտարահիգիենիկ վիճակին, խցերում ջրի ծորակների չգործելուն, սպիտակեղենի կեղտոտ լինելուն, հիգիենիկ թղթի բացակայությանը, խոնավությանը, սենյակների փոշոտ լինելուն և ջրի ծորակների չգործելուն, ապա նշված թերությունները շարունակական բնույթ չեն կրում և տեղում վերացվում են, իսկ այդպիսիք արձանագրվելուց հետո համապատասխան ծառայողները ենթարկվում են կարգապահական տույժերի:

ՁՊՎ-ների լոգարաններում տաք ջուր ապահովելու համար տեղադրվում են էլեկտրական տաքացուցիչներ, իսկ այն ՁՊՎ-ներում, որտեղ հաճախակի ընդհատվում է ջրամատակարարումը տեղադրվում են նաև ջրի բաք և մղիչ պոմպեր՝ մշտական ջուր ապահովելու համար:

ՁՊՎ-ների խցերում, որտեղ բնական լուսաթափանցելիությունը թույլ է, տեղադրվում են հզոր էլեկտրական լամպեր, որոնց միջոցով ապահովվում է արհեստական բավարար լուսավորությունը:

## 7. ԳԼՈՒԽ

### Դիտորդական խմբի 2013թ-ի աշխատանքների արդյունքում գրանցված առաջընթացները

2013թ-ի ընդհանուր աշխատանքների արդյունքում Դիտորդական խումբը ՀՀ ոստիկանության հետ համագործակցելով արձանագրված հիմնախնդիրները հրատապ հաշվետվությունների միջոցով ներկայացնելու ՀՀ ոստիկանությանը և ոստիկանության կողմից տվյալ հիմնախնդիրների ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ կարելի է ասել, որ գրանցվել են մի շարք առաջընթացներ, մասնավորապես՝

- Նվազել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ 3 օրից ավել ՁՊՎ-ներում պահված կալանավորված անձանց թիվը և պահման ժամանակահատվածը, համեմատած անցած տարիներին արձանագրված փաստերի հետ: Այն 2007թ-ին հասնում էր մինչև 27 օրվա, 2008թ- 45 օր, 2009թ- 27 օր, 2010թ. -3 օր, 2011թ-ին մեկ դեպք՝ 6 օր, 2012թ-ին 5 դեպք մինչև 5 օր տևողությամբ, իսկ 2013թ-ին 2 դեպք՝ 2-3 ժամ տևողությամբ:
- Նվազել են 8 ժամից ավել կատարվող քննչական գործողությունները, թե՛ ժամի, թե՛ քանակի տեսանկյունից: 2012թ-ին գրանցված 31 ժամը նվազել է մինչև 13 ժամի:
- 2012թ-ի համատարած կատարվող խախտումը, այն է՝ չէր գրանցվում արգելանքի վերցնելու պահը՝ 2013թ-ի վերջում նվազել է մինչև 2 դեպքի:
- 2012թ-ի հետ համեմատած՝ հետախուզվող մեղադրյալին արգելանքի վերցնելուց ձերբակալելու իրավախախտումները նվազել է 82%-ով և 2013թ-ի վերջում հազվադեպ կարելի է հանդիպել նմանատիպ իրավախախտման:
- Բացառությամբ 1-2 դեպքի՝ նվազել է առանց բավարար հիմքերի կալանավորված անձանց ՁՊՎ ընդունելը:
- Միանշանակ կարող ենք պնդել, որ 2013թ-ի վերջում բացառվել է արդեն իսկ ձերբակալված անձին բերման ենթարկելու իրավախախտումը:
- Նվազել է ձերբակալումից հետո ձերբակալվածին ուշ ՁՊՎ ընդունելու իրավախախտումը: 2012թ-ին գրանցված 28-ից մինչև 34 ժամ ուշացումը նվազել է, մինչև 2 դեպքի՝ առավելագույնը 13 ժամ և 23 ժամ:
- 2013թ-ի ավարտին կարելի է արդեն լուծված համարել 2012թ-ին ընդհանրապես չգործող ձերբակալվածին ՁՊՎ ընդունելու կամ մի հիմնարկից մյուս հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ ձերբակալվածի ընտրած անձին հեռախոսակապի միջոցով իրազեկելու հարցը:

- Ամբողջությամբ լուծվել է մինչ 2013թ-ը ՁՊՎ-ում ոստիկանության կողմից կատարվող բուժօգնության հարցը, որը ներկայիս պահին միայն իրականացվում է հրավիրված շտապօգնության բժիշկների կողմից:
- 2012թ-ին ՁՊՎ-ներում գրանցված 23 հոգեկան կամ սուր, վարակիչ հիվանդություն ունեցող անձանց քանակը նվազել է մինչև 5:
- Մինչ 2013թ-ը ՁՊՎ-ների բուժսենյակում պահվող, բայց չօգտագործվող 32 անուն դեղորայքի ցանկը վերանայվել է և փոխարինվել է 4 անուն դեղորայքով՝ նախատեսված առաջին բուժօգնության համար:
- Դիտորդական խմբի միջնորդությամբ ՀՀ ոստիկանության կողմից մշակվել է ժամկետանոց դեղորայքի ոչնչացման մեխանիզմ:
- Ոչ բավարար, բայց բարձրացվել է ՁՊՎ-ում պահվող անձանց անվճար սնունդ տրամադրելու գումարի չափը՝ 690 ՀՀ դրամ, իսկ կանանց և անչափահասների համար՝ 790 ՀՀ դրամ, որը 2012թ-ին կազմում էր հաջորդաբար՝ 600 ՀՀ դրամ և 705 ՀՀ դրամ, իսկ 2006թ-ից մինչև 2012թ-ը կազմում էր 450 ՀՀ դրամ :
- Դիտորդական խմբի միջնորդությամբ ժամանակ առ ժամանակ մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել ՁՊՎ-ներում:

**ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը՝**

**ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչության հերթապահ մասի, հերթապահ մասերի գործունեության ղեկավարման բաժանմունքի կողմից 2013թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին**

ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչության հերթապահ մասի հերթապահ մասերի գործունեության ղեկավարման բաժանմունքը 2013թ. ընթացքում համակարգել և վերահսկել է ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների ենթակա բաժինների հերթապահ մասերի և Երևան քաղաքի վարչության ՁՊՎ-ների գործունեությունը, որի արդյունքում արձանագրվել է դրական առաջընթաց:

ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայությունների 2013թ. գործուղումների պլանի 1.2.2 կետի համաձայն գործնական-մեթոդական օգնություն է ցույց տրվել

նստիկանության Գեղարքունիքի, Լոռու և Արմավիրի մարզային վարչությունների ենթակա ստորաբաժանումների հերթապահ մասերի ՁՊՎ-ների վարչակազմերին:

Ուսումնասիրվել է նստիկանության 9 (Վայքի, Եղեգնաձորի, Արարատի, Արտաշատի, Մասիսի, Կոտայքի, Տարոնի, Աշտարակի և Վաղարշապատի) բաժինների ՁՊՎ գործունեությունը, որի արդյունքում տեղում վերացվել են թերությունները, արվել են մի շարք առաջարկություններ ՁՊՎ-ների գործունեությունը բարելավելու, թերությունները և խախտումները հետագայում բացառելու ուղղությամբ: Ոստիկանության համակարգի գրեթե բոլոր ՁՊՎ-ներում կատարվել են կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ:

ՀՀ ոստիկանության բժշկական և տնտեսական վարչությունների ծառայողների հետ համատեղ ուսումնասիրվել է ոստիկանության Տավուշի բաժնի նորակառույց ՁՊՎ-ն, տրվել է դրական եզրակացություն և հանձնվել է շահագործման:

Բաժանմունքը մասնակցել է Արտաքին գործերի նախարարության և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված հինգ սեմինար խորհրդակցությունների և ոստիկանության համակարգի ՁՊՎ-ներում հասարակական դիտորդների խմբի տարեկան հաշվետվության խորհրդակցությանը:

Դիտորդների խմբի անդամների հետ անցկացվել է 12 հանդիպումներ, որոնց ժամանակ քննարկվել են ՁՊՎ-ների գործունեության բարելավման վերաբերյալ հարցեր:

Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների, ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի ցանկացած դրսևորում բացառելու, ինչպես նաև ոստիկանության հանդեպ հասարակության վստահությունն ամրապնդելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ ՀՄ ՀՄԳՂ բաժանմունքի կողմից մշակվել և ՀՀ ոստիկանության պետի հաստատման է ներկայացվել <<Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի իրավական չափանիշների կիրառումն ապահովելու մասին>> թիվ 20-Ց ցուցումը:

ՀՀ ոստիկանության համակարգում գործող ձերբակալվածներին պահելու վայրերի գործունեությունը բարելավելու, տեղ գտած թերությունները վերացնելու և դրանք հետագայում բացառելու նպատակով, ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի և մարզային վարչություններին տրվել են թվով 13 շրջաբերականներ:

## 8. ԳԼՈՒԽ

### Դիտորդական խմբի ներքին կանոնակարգում կատարված փոփոխությունների, խնդիրների վերլուծություն

Դիտորդական խումբը իր գործունեության ընդհանուր աշխատանքները բարելավելու, և խմբի աշխատանքները ավելի արդյունավետ կազմակերպելու համար ներքին կանոնակարգում 13 կետից բաղկացած փոփոխությունների և լրացումների առաջարկության փաթեթով դիմել էր ՀՀ ոստիկանության պետին:

Նշված 13 կետերում ներառված էր լրացումներ՝ ձևակերպումների մեջ, Դիտորդական խմբի կազմում փաստաբանի ներգրավման արգելքի վերացման, փորձագետների ներգրավումը խմբի աշխատանքներում, խումբ ընդգրկվող նոր անդամի փորձաշրջան անցնելու, խմբի հաշվետվությունները ևս մեկով համալրելու (հրատապով), հաշվետվություններին տրվող մեկնաբանությունների օրերի կրճատման և այլն:

Ներքին կանոնակարգում փոփոխություններ կատարելու վերաբերյալ մի քանի անգամ կազմակերպվել է հանդիպում և Դիտորդական խումբը ներկայացված յուրաքանչյուր կետի վերաբերյալ տվել էր պարզաբանումներ և կարևորել էր անհարժեշտությունը:

2013թ-ի հուլիսի 16-ին ՀՀ ոստիկանության պետի կողմից հաստատվեց ներքին կանոնակարգը, բայց միակողմանի լրացումներով և փոփոխություններով:

Ինչու միակողմանի, քանի որ ի սկզբանե կարգում փոփոխություններ կատարելու նախաձեռնությունը Դիտորդական խմբին էր և խումբը ներկայացրել էր 13 կետից բաղկացած առաջարկ, բայց կարգում կատարվեց 11 կետից կազմված փոփոխություններ և լրացումներ: Նշված 11 կետերում կատարված փոփոխություններից և լրացումներից Խմբի կողմից ներկայացրած 13 կետից անդարադրաձ էին կատարել միայն 3 կետի, այն էլ՝ մասնակի:

Արդյունքում՝ Խմբի կողմից ներկայացված ոչ մի առաջարկ չի ընդունվել ոստիկանության կողմից և ավելին՝ կատարված փոփոխություններով որոշակի խոչընդոտներ է ստեղծվել խմբի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

Ներկայացնում ենք մի քանի օրինակ, որպեսզի ավելի հստակ պատկերացում կազմվի:

2. Դիտորդական խմբին տրված չէ հնարավորություն, որպեսզի հրատապ հաշվետվությամբ դիմի ոստիկանությանը:

Մինչ օրս Դիտորդական խումբը հնարավորություն ուներ ընթացիկ հաշվետվությամբ դիմել ՀՀ ոստիկանությանը՝ մեկնաբանություն ստանալու կապակցությամբ՝ 30 օրվա ընթացքում: Փոփոխությունների արդյունքում 30 օրը փոխարինել են 40 օրով:

3. Անհասկանալի պատճառներով խմբի նախագահի ընտրության մեկ տարին փոխարինվել է 3 տարով և սահմանվել է համապատասխան սահմանափակումներ՝ 2 անգամից ոչ ավել, և այլն:

*Դիտորդական խումբը կարծում է, որ եթե ոստիկանությունը չունի կաշկանդվածություն՝ Դիտորդական խմբի մուտքը ՁՊՎ-ներ ապահովելու, ապա պետք է վերանայի ներքին կանոնակարգը և կարգից վերացնի Խմբի աշխատանքները խոչընդոտող կետերը:*

### **ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը՝**

**<<Դիտորդական խմբի գործունեության կարգը հաստատելու մասին>>  
ՀՀ ոստիկանության պետի թիվ 1-Ն հրամանում կատարված  
փոփոխությունների, խնդիրների վերլուծություն**

ՀՀ ոստիկանության պետի 14.01.2005թ. թիվ 1-Ն հրամանում կատարված փոփոխությունների և կոնկրետ ձևակերպումների վերաբերյալ հայտնվում է, որ դրանք կատարվել են դիտորդական խմբի հետ կազմակերպված համատեղ քննարկումների արդյունքում ձեռք բերված համաձայնությունների շրջանակներում:

ՀՀ ոստիկանությունը համակարծիք չէ դիտորդների խմբի այն մտահոգությանը, որ 1-Ն հրամանում կատարված փոփոխությունները խոչընդոտ են հանդիսանում խմբի աշխատանքները արդյունավետ կազմակերպելուն: Ինչ վերաբերում է ոստիկանության կողմից դիտորդների խմբի ՁՊՎ-ներ մուտք գործել սահմանափակելուն, ապա դրա մասին խոսք անգամ չի կարող լինել, քանի որ դիտորդների մուտքը ՁՊՎ-ներ սահմանվում է 1-Ն հրամանի 14, 15 և 16-րդ կետերով և նշված կետերը փոփոխության չեն ենթարկվել:

## 9. ԳԼՈՒԽ

### Ընթացիկ հաշվետվությունների վերլուծություն

Դիտորդական խմբի 2013-ի աշխատանքների ընթացքում ՁՊՎ-ներում արձանագրվել են մի շարք թերություններ և խախտումներ: Արձանագարած իրավախախտումների վերաբերյալ Դիտորդական խումբը հրատապ հաշվետվությունով դիմել է խախտումը կատարած համապատասխան գերատեսչական մարմին՝ անհարաժեշտ գործողություններ կատարելու ուղղությամբ:

Դիտորդական խումբը 2013թ-ի ընդհանուր աշխատանքների ընթացքում անհրաժեշտ գերատեսչական մարմիններին ներկայացրել է 66 հրատապ հաշվետվություններ:

- ՀՀ ոստիկանություն – 54 անգամ
- ՀՀ քննչական գիսավոր վարչություն – 1 անգամ
- ՀՀ Գլխավոր դատախազություն – 7 անգամ
- ՀՀ Առողջապահության նախարարություն – 3 անգամ
- ՀՀ ՔԿՀ վարչություն – 1 անգամ

Ըստ Դիտորդական խմբի՝ ներկայացված Ընթացիկ հաշվետվությունների 62.1% տրվել են դրական պատասխան՝ համապատասխան թերությունները և խախտումները վերացնելու և կանխարգելիչ մեխանիզմներ կիրառելու ուղղությամբ, 37.9%-ին տրվել են ոչ բավարար պատասխաններ, իսկ 1 ընթացիկ հաշվետվությանը ընդհանրապես պատասխան չի տրվել ՀՀ ոստիկանության կողմից:

Ընթացիկ հաշվետվությունների կարող եք ծանոթանալ նաև

Դիտորդական խմբի ինտերնետային էջում՝

[www.policemonitoring.org](http://www.policemonitoring.org).

## ՀՀ ոստիկանության մեկնաբանությունը՝

### Ընթացիկ հաշվետվությունների և դրանց մեկնաբանությունների վերլուծություն

ՀՀ ոստիկանության շտաբում ստացվել են դիտորդների խմբի կողմից ներկայացված տարեկան 1 և 42 ընթացիկ հաշվետվություններ, ինչպես նաև ՁՊՎ-ների գործունեությունը բարելավելու ուղղությամբ 14 գրություններ, որոնք հերթապահ մասերի ղեկավարման բաժանմունքի կողմից քննարկվել են և տրվել են հանգամանալից մեկնաբանություններ, իսկ դրանցում արձարժված խախտումներն ու թերությունները բացառելու նպատակով 5 հանձնարարականներ են տրվել ոստիկանության Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզային վարչություններին և Երևան քաղաքի վարչությանը:

Պրակտիկան ցույց է տվել, որ դիտորդների խմբի կողմից ՁՊՎ-ներ կատարած այցելությունները նպաստում են տեղ գտած թերությունները և խախտումները ի հայտ բերելուն, որոնք ընթացիկ (**այլ ոչ հրատապ**) հաշվետվությունների միջոցով ներկայացվում են ՀՀ ոստիկանություն և դրանց տրվում են դրական լուծումներ, իսկ թե ընթացիկ հաշվետվությունների քանի տոկոսին է տրվել դրական և քանիսին բացասական պատասխաններ դա կապված է կատարված ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքներից:

Ամեն դեպքում, ոստիկանությունը բարձր է գնահատում 2013թ. ընթացքում դիտորդների խմբի հետ համատեղ աշխատանքը, որի արդյունքում համատեղ ջանքերով իրականացվել են մի շարք բարեփոխումներ ՁՊՎ-ների և ոստիկանության բաժինների հերթապահ մասերի գործունեությունում: